

Ա. ՇԱՀՈՒՄՅԱՆ
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

ՄԱՐՍԻՍ ԳՈՐԿԻ



891.71 | 394

6-23 | Puckmeyer
Kuduh 5 9/11

18/18	4/11	131
6/11/57	19/11	15

891.71

Q-23

891.71. 909/2

9-23

Umay.

Ս. ՇԱՀՈՒՄՅԱՆ

Ա. ՄՈՒՎՅԱՆ

891.71.092 [9-004]

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ

(Թարգմանություններ յեվ հոդվածներ)



Պետական հրատարակչություն

Յ Ե Բ Ե Վ Ա Ն

1966

4502
394
A 4982


Պատ. խմբագիր՝ Գ. Հովնան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռիսանյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Հր. 3772 գլխավոր № 2160

Պատուեր 824. տիրաժ 4000

Հանձնված է տպագրության
23 հունիսի 1936 թ. ստորագրված
է տպելու հուլիսի 13-ին 1936 թ.

Պետհրատի տպարան,
Յերևան, II Գնունի, № 4



ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեռավ պրոլետարիատի մեծանուն յերգիչ Ալեք-
անդ Մաքսիմովիչ Գորկին: 20-րդ դարի համաշխար-
հային գրականության պատմությունը չուներ նրա
հավասար մի ուրիշը, վորի անունն այնպիսի հերո-
սական ուժգնությամբ հնչեր բոլոր ժողովուրդների,
բոլոր ազգությունների գրական, հասարակական ու
քաղաքական կյանքում: Գորկին վորպես գրչի մեծ
վարպետ, վորպես պայծառ հասարակական դեմք
բացառիկ միջազգային մասնայականություն եր վա-
յելում: Յերկրագնդի վրա չկա համարյա դիր ունե-
ցող մի ազգություն, վոր թարգմանած չլինի նրան,
չկա անգամ մի խուլ անկյուն, ուր չսված չլինի
Գորկու անունը:

Մեզ մոտ ԽՍՀՄ-ի ժողովուրդների ամենասիրելի
գրողն է Գորկին: Նրա աշխատությունները թարգ-
մանվել ու հրատարակվել են տասնյակ հազարավոր
որինակներով: Տասնյակ մանր ժողովուրդներ լենինի
-Ստալինի հանճարեղ ազգային քաղաքականության
չնորհիվ կարճ ժամանակամիջոցում կարողացան ստեղ-
ծել իրենց գիրն ու գրականությունը և այն առաջին
թոթովող բառերի թվում նրանք լսում ու կարդում
են Մաքսիմ Գորկու անունը:

Առաջին անգամ յերևան դալով Անդրկովկասի մամուլում և տարիներ ի վեր կապ պահպանելով այդ յերկրի դրական, հասարակական ու քաղաքական կյանքի հետ Գորկին դառնում է Անդրկովկասի ժողովուրդների աշխատավոր մասսաների ամենասիրելի յերդիչը: Չնայած դեներալ Գոլիցինի կատաղի բռնությամբ ստեղծված դառն ու խավար մթնոլորտին այնուամենայնիվ Գորկու հուժկու ձայնը հնչում էր վոչ միայն Անդրկովկասի ռուսական մամուլում, այլ նաև այդ յերկրի մյուս ժողովուրդների մամուլում:

Ինքնըստինքյան հետաքրքիր ու լուրջ ուսումնարության արժանի յե պրոլետարական այդ մեծադույն յերդիչի դրական ու հասարակական կյանքը հայ իրականության մեջ: Գորկին համաշխարհային դրականության այն բացառիկ դեմքն է, լուր ամենից շատ է թարգմանվել հայերեն: Նրա վաղ շրջանի փոքրիկ նովելները անխտիր կերպով թարգմանվել ու տպագրվել են նախահեղափոխական հայ մամուլում: Այդ թարգմանությունների գործն առանձնապես մեծ թափ է առնում 900-ական թվականներից հետո: Պայքար Գորկու համար ու Գորկու դեմ քիչ եջեր չեն դրավում հայ անցյալի մամուլում: Այդ պայքարում վճռական դեր է խաղացել հայ բոլշևիկների քննադատությունը:

Ստեփան Ծահումյանը մի խումբ կոմունիստ ընկերների հետ միասին (Ա. Մուսվյան, Հ. Հակոբյան, Ռ. Դաշտոյան և ուրիշները) կազմակերպում է Գորկու մասսայականացումը և նրա համար տարվող

պայքարը: Ինքը Շահումյանն առաջինն էր (1901 թ.)
 վոր թարգմանեց Մ. Գորկու «Մի անգամ աշնանը»
 հիանալի սլափովածքը: Դա առաջին յերկն էր Գոր-
 կույ, վոր առանձին գրքով լույս տեսավ հայերեն
 լեզվով: Թարգմանությունը բավական չէր, հարկա-
 վոր էր հոգւածներ գրել, հարկավոր էր մերկացնել
 Գորկու բաղմաթիւ թշնամիներին Անդրկովկասում,
 հարկավոր էր ծանոթացնել մասսաներին Գորկու
 հետ, հարկավոր էր ցույց տալ նրա համաշխարհա-
 յին նշանակությունը վորպես արվեստագետի, վոր-
 պես մտածողի: Յեւ ահա Շահումյանը հրապարակ
 է դալիս մի ընդարձակ քննադատական հոգւածով
 Գորկու գեղարվեստական աշխատությունների մասին:
 Այդ հոգւածում Շահումյանը բոլշևիկյան հատուկ
 արությամբ հարվածում է բուրժուազիայի բոլոր
 տեսակի լակեյներին, վորոնք ամեն կերպ ուզում էին
 վարկաբեկել, աղավաղել Գորկու գրական ու հասա-
 րակական դեմքը Անդրկովկասի աշխատավորության
 առաջ: Յեւ չնայած Ժանդարմերիայի սև ցենզու-
 րայի ամենախիստ պայմաններին Շահումյանը դեռ
 1911 թ. հրապարակորեն հայտարարեց, վոր «Գոր-
 կին սրբաշնորհական գրականության զարդն ու պար-
 ծանքն քե» և վոր «բանվորները հսկարտությամբ կա-
 թող են ասել. — Այո՛, Գորկին մերն է, նա մեր
 նկարիչն է, մեր բարեկամը ու ղինակիցը՝ աշխա-
 տանքի ազատագրման վեհ պայքարի մեջ»:

Հետագայում «Հայ գրականության ժողովա-
 ծու»-ի մասին գրած իր հոգւածում (1916 թ.)
 Շահումյանը դարձյալ բարձր գնահատելով Մաքսիմ

Գորկու գերը պրոլետարական ինտերնացիոնալ գրա-
կանություն ստեղծելու պրոցեսում անվանում է
Նրան «միջազգայնության մաքուր զգացմունքների
ու ձգտումների դրոշակակիրը»:

Շահումյանը մենակ չէր իր այն պայքարի ըն-
թացքում, վոր նա տանում էր Գորկու համար:
Նրան հետևում էր նաև մի ուրիշ ականավոր բու-
շավիկ—Ա. Մուսիլյանը: Ընկ. Մուսիլյանը հրապարակ
յեկավ մի հատուկ հոդվածով «Պայքար» թերթում
(1916 թ.) և վերլուծեց Գորկու գեղեցիկ հեքիաթ-
ները իտալիայի բանվորների կյանքից: Նախապես
ջրելով ռուս և հայ բուրժուական քննադատների
բամբասանքները Գորկու յերկերի գեղարվեստական
արժեքի մասին ընկ. Մուսիլյանն ընդդոմ է—
«Այդ յերկերը (Գորկու վերջին չրջանի յերկերը)
յեկան ապացուցելու, վոր պրոլետարիատի աշխար-
հայացքը ու աշխարհազգացումը Գորկու գեղար-
վեստական ստեղծագործությանը հզոր թափ են տը-
վել»: «Իսկ նրա հեքիաթները,—դրում է Մուսիլյա-
նը,— վողողված են խոր մարդկային անկեղծ սի-
րով ու մարդաբանական հավատով գեպի մարդկու-
թյան պայծառ ապագան: Ամբողջ գրքից բուրում է
մի դարմանալի ու վարակիչ լավատեսություն, կեն-
սաթոթիռ աշխարհազգացում»:

Ընկ. Մուսիլյանը նույնպես չի բավականանում
միայն հոդված գրելով. նա ինքն ևս ձեռնամուխ է
լինում Մաքսիմ Գորկու իտալական գեղեցիկ հե-
քիաթների թարգմանության դործին:

Այս փոքրիկ ժողովածուն, վորը մենք կազմել ենք Գորկու մահւման առթիւ՝ հայ անցյալի բուշեմիկյան մամուլից, ընդգրկում է՝ Ս. Շահումյանի «Մի անգամ աշնանը» թարգմանությունը և Նրա հոգւածը Գորկու մասին, Ա. Մռավյանի թարգմանությունը Գորկու հեքիաթներից և Նրա հոգւածը՝ Գորկու հեքիաթների ժողովածուի մասին։ Ապա ընկ. Ռ. Դաշտոյանի մի թարգմանությունը Նույնպէս Գորկու իտալական հեքիաթների շարքից։

Այս ժողովածուն մի փոքրիկ ծաղկաւունջ է, վոր մենք բերում ենք մեծանուն յերգչի պայծառ հիշատակին։

Գ. ՀՈՎՆԱՆ

20 հունիսի 1936 թ.

Յերեւան։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I	Մի անգամ աշնանը	Ս.	Շահումյան
II	Հեֆիաթ	Ա.	Մռավյան
III	Հեֆիաթ	Ա.	Մռավյան
IV	Հեֆիաթ	Ռ.	Դաշտոյան

I. ՄԻ ԱՆԳԱՄ ԱՇՆԱՆԸ...

... Մի անգամ աշնանը յես մի շատ անհարմար և անախորժ գրության մեջ ընկա : Մի ոտար քաղաք էլի յեկել . վոչ մի ծանոթ չարատահեց , գրպանումս ել փող չըկար . և յես մնացի այդպես առանց բնակարանի ու առանց կռակի : Առաջին որերը յես ծախեցի հագուստիս մի մասը , վոր կարելի յեր ծախել : Հետո ուղեւորակեցի դեպի նավահանգիստը , վոր գտնվում է «Գետաբերան» կոչվող հեռավոր քաղաքամասում : Նավագնացության ժամանակ այնտեղ կյանքը յեռում էր , աշխուժ , աշխատանքով լի . մարդ հեշտությամբ կարող էր իր համար գործ գտնել : Իսկ այդ ժամանակ ամեն ինչ դատարկ էր ու խաղաղ , վորովհետեւ արդեն հոկտեմբեր ամսըվա վերջերն էլին :

Յես թափառում էի միայնակ դատարկ

շինությունների ու փոքրիկ տախտակա-
մած խանութների միջև ու հազիվ էյի
շարժում հոգնած վտաքելոս։ Աչքերս գետ-
նին հառած, ուղում էյի այդ ցեխերի մեջ
ուտելիքի վորևէ մնացորդ գտնել և մտա-
ծում էյի միևնույն ժամանակ. ի՞նչ լավ
քան է կուշտ լինել...

Քաղաքակրթության ներկա յայտմանե-
րում հոգեկան քաղցն ավելի հեշտ կարելի
յէ հաղեցնել, քան մարմնականը։ Դուք
թափառում եք յերկար փողոցներով. ձեր
շուրջը բարձրանում են գեղեցիկ շինու-
թյուններ, վորոնց մասին ամենայն հա-
մարձակությամբ կարող եք ասել, վոր նը-
րանք նույնչափ գեղեցիկ են և ներքուստ.
նույնչափ ճաշակով ու շքեղ կահավորված։
Այդ բոլորը կարող է ձեր մեջ քաղցը մը-
տած մտենքների առաջ թելել ճարտարապե-
տության, առողջապահության և ելի ու-
րիշ շատ մեծ-մեծ քաների մասին։ Ձեզ
արտասում են տաք ու գեղեցիկ հաղնված
մարդիկ. նրանք անչափ քարի յեն և քա-
ղաքավարի. նրանք ամենայն զգուշու-
թյամբ խույս են տալիս ձեզանից, վոր-

պետզի չնկատեն ձեր ցավալի գոյությու-
նը... Աստված վկա, քաղցած մարդու հո-
գին ավելի լավ է կերակրվում միշտ, քան
կուշտ մարդու հոգին: Ահա ձեզ մի դրու-
թյուն, վորից կարելի չէ շատ սրամիտ
յեզրակացություն դուրս բերել կուշտ
մարդկանց ոգտին:

... Գիշերը մոտենում էր: Անձրև էր
գալիս և հյուսիսից մռնչալով փչում էր
քամին: Նա կատաղի շվից էր բարձրաց-
նում դատարկ մնացած փայտաշեն խա-
նութներում և ծեծում էր հյուրանոցների
սախտալիսած պատուհանները: Գետի ալիք-
ները նրա հարվածներից ուռչում ու փրր-
փրրում էին և կատաղի արագությամբ,
միմյանց վրա թռչելով, շտապում, անհե-
տանում էին մթության մեջ... Կարծես
գետը դբում էր, վոր ձմեռը մոտենում է,
և վախեցած փախչում էր առուցի կաշ-
կանդով շղթաներից, վոր հենց այդ գիշեր
կարող էր գցել նրա վրա հյուսիսային քա-
մին: Յերկինքը թանձր էր ու խավար,
այնտեղից անընդհատ տեղում էին անձ-
րևի մանր կաթիլները: Քիչ հեռվում

նշմարվող յերկու չորացած ու ծոված ծա-
ռերը և նրանց մոտի՝ կողքի վրա ընկած
նավակը— լրացնում, ընդգծում էին բը-
նության այդ տխուր տեսարանը:

Հաստակը կոտրված, շուռ յեկած նավակ
և սառը քամուց կողոպտված, ծեծված ու
ծերացած ծառեր... Շուրջս ամեն ինչ ա-
վերվել ու անապատ է դարձել. յերկինքը
չարունակում է սգալ, արտասվել: Մռայլ
ու դատարկ է ամեն ինչ: Կարծես ամեն
բան իմ շուրջը տկսել է մեռնել. շուտով
միմիայն յես պիտի մնամ կենդանի, իսկ
հետո ինձ էլ սպասում է նույն սառը մահը:

Այդ ժամանակ յես 18 տարեկան էյի...
յերանելի՜ ժամանակ...

Յես յերկար թափառեցի սառն ու խոնավ
ավազներով, ատամներիս կրճատեցով շատ
յերգեր հյուսեցի սովի և ցրտի սրտովին,
և հանկարծ փոքրիկ խանութներինց մեկի
յետևը տեսա մի փոքրիկ կծկված ու գեա-
նին կպած կանացի մարմին: Անձրեից
թրջված շորերը կպել էին նրա կուսացած
ուսերին: Յես մոտեցա նրան ու սկսեցի
դիտել: Նա ձեռքով փորում էր թաց ավա-

զը և ուղում էր, ըստ յերևույթին, անցք
բանալ դեպի խանութի ներսը...

— Այդ ինչի՞ համար ես փորում, —
հարցրի յես նստելով կողքին...

Նա մի ճիշ արձակեց և վեր թռավ:
Այժմ, յերբ նա, դիմացա կանգնած, վա-
խեցած նայում էր ինձ իր ըսյն բացած
կապույտ աչքերով, յես տեսա, վոր դա իմ
հասակակից մի աղջիկ է, վերին աստիճա-
նի դրամիչ դեմքով, վորը, զխախտաբար,
դարդարված էր յերեք հաստ մեծ կապույտ
բծերով: Այդ մի փոքր փչացնում էր տր-
պավորությունը, թեև կատաղածները չատ
կանոնավոր էյին դատավորված: Մի — մի
հատ համարստը չափի աչքերի տակը և մի
հատ ճակատի մեջտեղը: Յերևում էր, վոր
խփող ձեռքը կատարելագործվել է մարդ-
կային դեմքեր փչացնելու արհեստում:

Աղջիկը նայում էր ինձ մրա, և նրա աչ-
քերում փայլող յերկյուղը հետզհետե մա-
րում, անհետանում էր... Ահա նա ավա-
ղատ ձեռքերը թափ տվեց, ուղղեց գլխի
չիթ աղլուխը, կծկվեց ու ասաց.

— Ինչպես տեսնում եմ, դու յե՛լ ես սո-

458 294
A 4982



ված...դե՛ մի փորիր տեսնեմ... Իմ ձեռ-
քերը հոգնել են: Այստեղ, — նա գլխի շար-
ժումով ցույց տվեց խանութը, — անպատ-
ճառ հաց վլիխի, դուցե և յերչիկ: Այս խա-
նութում դեռ առուստուր կա...

Յես սկսեցի փորել. իսկ նա միքիչ կանգ-
նեց, նայեց ինձ վրա, հետո նստեց իմ կող-
քին և սկսեց ոգնել...

Մենք լուռ աշխատում էինք:

Յես չեմ կարող հիմա հաստատաբար ասել,
չի՞չո՞ւմ էյի արդյոք այդ ժամանակի քրե-
սական ոլորների հաստատվոր ժողովածուն.
բարոյագիտություն, սեփականության ի-
րավունք և այլ այսպիսի բաներ, վորոնք,
ինչպես ասում են իմաստուն մարդիկ, յեր-
բեք չպետք է մոռանալ կյանքում, վոչ մի
դիտվածում... Վորպեսզի կարելույն չափ
մոտ լինեմ ճշմարտությանը, խոստովան-
վում եմ, կարծեմ, այնքան տարվել էյի
փորելով, վոր ամեն բան մոռացել էյի,
բացի... այն բանից, ինչ վոր կարող էյի
գտնել խանութում:

Արդեն միջում եր: Թաց ու ցուրտ խա-
վարը հետզհետե թանձրանում եր իմ շուր-

Ջը : Այլիքներէ աղմուկը հետզհետե խլա-
նում էր , իսկ անձրեւն ավելի ու ավելի ուժ-
գին ծեծում էր նավակի տախտակները . . .
Հեռվից լսվում էր դիշերապահի ճրրալի
ու մեղամաղձոտ ձայնը . . .

— Հաստակը տախտակա՞ծ է թե՞ չէ , —
կամաց հարցրեց ինձ իմ ոգնակաւնը :

Յես չհասկացա ինչի մասին է հարցնում
և լռեցի :

— Գուցե տախտակած է . . . Այդ ժամա-
նակ մեր չարչարանքը իդուր կլինի . հողը
կփոքենք , կհասանենք տախտակներին , հե-
տո՞ . . . Ավելի լավ է կողպեքը կոտ-
րենք . . . Թույլ կողպեք է յերևում . . .

Լավ մտքերը շատ աակամբ են ծագում
կնոջ գլխում , բայց և այնպէս . . . ծագում
են , ինչպէս տեսնում եք : Յես միշտ գնա-
հատել եմ լավ մտքերը և աշխատել եմ կա-
րելուն չափ ոգտվել նրանցից :

Կողպեքը գտա , քաշեցի ու դուրս պոկեցի
իր ողակների հետ միասին . . . Ընկերուհիս
խկույն ոճի պէս գալարվեց և ներս սողաց
խանութը բացված քառանկյունի անցքով :

— Կեցցե՛ս , տղա , — բացականչեց նա ներ

սից :

Կնոջ մի փոքրիկ գովասանքը ինձ համար
սովելի արժե, քան տղամարդի յերկար գո-
վաքանությունը, կուղեք լինի այդ տղա-
մարդը նույնիսկ ավելի սերճախոս, քան
բոլոր հին ու նոր հռետորները միասին վեր-
ցըրած: Բայց այն ժամանակ տրամադրու-
թյունն այսքան լավ չէր, և յես առանց ու-
շադրություն դարձնելու ընկերուհուս սի-
րախոսության վրա, հարձ ու մախեցած
հարցրի.

— Բան կա՞ . . .

Նա միապաղաղ ձայնով ակօսեց թվել իր
գյուտերը:

— Մի զամբյուղ . . . շիշերով, դատարկ
տոպրակներ . . . մի հովանոց . . . մի յերկաթե
դուխ . . .

Դրանցից վոչ մեկը չէր կարելի ուտել:

Յես զգում էի, վոր հույսերս չքանում
են:

. . . Բայց հանկարծ նա ուրախ բացական-
չեց:

— Ահա՛ . . . ա՛յ վորտեղ է:

— Ո՞ր :

— Հացը... մի բոմբի... միայն թրջված
է, վերցրու...

Բոմբին ընկալ վտառերիս մոտ, իսկ քիչ
հետո հայտնվեց և ինքը հարգելի ընկերու-
հիս : Յես իսկուպէն մաս — մաս արի հացը և
սկսեցի աղաւհ-աղաւհ ուտել...

— Ի՞նչ ել տուր տեսնեմ... և պետք
է աշատեղից հեռանալ... ո՞ր դնանք...

Նա ուշադրութեամբ նայեց չորս կողմը :

— Ա՛յ, ինչ վոր նամակ է յերևում, դնանք
նրա տակը նստենք :

— Գնա՛նք :

Յեւ մենք գնացինք դեպի նամակը : Յեր-
կուսս ել աղաւհութեամբ լսվում է ինք մեր
սովարը : Գետը մոնչում էր, անձրևը հետըղ-
հետե վարարում... Մի ինչ — վոր տեղից
յերկար ու սուր շվից էր լսվում.
Վարժես մեկը, ինչ- վոր հզոր ու վռվռեց
ջվախեցող մի եյակ սուլում ու ծաղրում էր
մեր աշխարհի վարդերը, այդ անպիտան
աշնանային յերեկոն և մեզ՝ այդ յերեկոյի
յերկու հերոսներին... Սիրտս վճկվում ու
նվում էր այդ շվիցից : Այնուամենայնիւ

յես մեծ ախորժակով ուտում եյի հացը :
Բարեկամ ուհիս յետ չեր մնում ինձանից . և
մենք այդպէս մոտենում եյինք նստակիւն :
— Անունդ ի՞նչ ե , — չգիտեմ ինչու հարց
րի յես :

— Նստաչա , — պատասխանեց նա ծամե-
լով :

Յես նայեցի նրան և սաստիկ ցավ զգացի
սրտիս մեջ : Հետո հայացքս ուղղեցի դեպի
իմ առաջ տարածված մթուժյունը , և ինձ
թվաց , վոր բախտիս միշտ հեզնոտ ու այ-
լանդանի դեմքը խորհրդավոր կերպով նա-
յում է ինձ ու ժպտում . . .

. . . Անճրեւը շարունակում եր ծեծել նստա-
կի վրայը , և նրա մեղմ շփփոցը տխուր
մտածմունքներ եր առաջացնում իմ մեջ :
Քամին շվիտցով ներս եր խուժում հատակի
մի ճեղքից , վորտեղ մի փոքրիկ տաշեղ ,
քամու շնորհիվ , շարունակ ինչ—վոր անհան-
գիստ ու վողբալի ձայներ եր հաճում : Գետի
ալիքները ճողփում եյին ափերը և նույն-
պէս վողբալի ու հուսափոտուր ձայներ հա-
նում : Նրանք կարծես մի ինչ—վոր քան ե-
յին պատմում , վոր վաղուց ձանձրացրել ,

դղվեցրել էր նրանց, մի սրտմաշուկ բան,
վորից նրանք կուղենային փախչել, բայց
վորի մասին դեռ անհրաժեշտ է յերկար
խոսել, պատմել... Անձրևի շփշփոցը միա-
նում էր ալիքների աղմուկին, և նավակի
շուրջը, դորշ մթության մեջ, մի յերկար
հառաչ էր լսվում. դա՛ բնության անմիտ
կատաղներից զղված, ամառայա՛ր ու աշնան,
տաքի ու ցրտի, արևի ու անձրևի անվերջ
փոփոխություններից նեղացած ու հոգնած՝
ծերուկ-յերկրագնդի յերկա՛ր ու ծա՛նր հա-
ռաչն էր... Քամին էլ իր շառաչյունով
ախուր, հուսա՛հատ յերգեր էր հորինում ու
տարածում գետի ալիքների ու նրա սև ու
անբնական ափերի վրա:

Մեր տեղը, նավակի տակը, զուրկ էր
հալմարություններից, նեղվածք էր ու խո-
նավ. ծաղկած հաստակից թափվում էին
անձրևի ցուրտ կաթիլները, սողոսկում էր
քամին: Մենք լուռ նստել դողում էինք:
Հոգնածությունից աչքերս փակվում էին:
Նատաչան մեջքը դեմ էր տվել նավակի կո-
ղին ու կուչ յեկել, մի փոքրիկ գունդ էր
դարձել: Ծնկները ձեռքերով գրկած ու

Վրդաւիւր նրանց հենաւծ, նա անթարթ նայում
եր գետի կողմը, և նրա մեծ ու լայն բա-
ցած աչքերը ամբիւի ևս մեծ ելին յերևում
իրենց տակի կապտածների շնորհով: Նա
բոլորովին չէր շարժւում. և այդ անշար-
ժութիւնն ու լռութիւնը, — զգում է-
յի, — կամաց-կամաց ինչ-վոր աս եր գցում
սրտիս մեջ. յես վախենում եյի իմ հարեա-
նուհուց... ուզում եյի խոսել նրա հետ.
բայց չգիտեյի ինչպէս սկսեմ:

Նա ինքը խոսեց:

— Ա՛խ, անիծյալ կյանք, ... — սարդ ու
վորոշ արտառանեց նա:

Յեւ այդ գանգատ չէր բախտից: Նրա
ձայնի մեջ այնքան անտարբերութիւն
կար, վոր չէր կարելի ատածը գանգատի
տեղ ընդունել: Յերևում եր, վոր մարդն
ուղղակի մտածել և կյանքի մասին և յեկել
և մի վորոշ յեզրակացութեան, վոր և հայտ-
նում է այժմ, և վորին յես չեյի կարող
ստատախանել առանց կեղծելու, առանց
ինձ հակասելու: Յես լուռ եյի. իսկ նա
կարծես իսկի չէր ել նկատում ինձ, առաջ-
վա պես անշարժ նստած եր:

— Մարդ չի ել սասկկում, պրծնի... —
նորից խոսեց նառաչան, այս անգամ կա-
մաց ու մտադրադ, և դարձյալ գանգատի
վոչ մի նշույլ: Դարձյալ յերևում եր, վոր
մարդ մտածել է վյանքի մասին, նայել է իր
վրա և հանգիստ հոգով յեկել այն յեղրակա-
ցության, վոր իր անձը վյանքի ծաղրից ու
կատակներից աղատելու համար նա մի բան
միայն կարող է անել — «տատկել»:

Մտքի աշդ չափ ճշտությունն ու պար-
զությունը սիրտս լցրեց անատելի ցավով
ու դժբախտով, և յես դգում եյի, վոր յեթե
շարունակեմ բռել, լաց պետք է լինեմ...
Իսկ այդ ամոթ կլինեիր մի վնոջ առջև. մա-
նավանդ, վոր նա ինքը ահա լաց չեր լի-
նում: Յես վճռեցի խոսել

— Ո՞վ է թափել քեզ, — հարցրի յես,
վորովհետև չկարողացա ուրիշ, ավելի մար-
դավարի խոսք գտնել:

— Պաշկեն, ուրիշ ո՞վ պիտի լինի, —
պարզ ու հանգիստ պատասխանեց նա:

— Պաշկեն ո՞վ է:

— Իմ սիրելեանը... մի հացթուխ:

— Շա՞տ է ծեծում քեզ...

— Շա'տ... ամեն հարբելիս ծեծում է :

Յեւ հանկարծ նա ավելի մոտեցավ ինձ
ու ականց Պաշկի, իր և իրենց հարաբերու-
թյունների մասին յերկար պատմություն
անել : Ինքը «փողոցն ընկած աղջիկներին
է, վորոնք... և այլն», իսկ նա մի շեկ բե-
ղերով, լավ գարմոն ածող յերիտասարդ է :
Նա հաճախ այցելելիս է յեղել «հասարա-
կաց տունը» և իր ուրախ քնավորությամբ
ու գեղեցիկ շորերով, իր «դարսովի» կո-
շիկներով ու 15 ուլբլիանոց վերարկույով
գրավել է Նատաշայի սիրտը : Այն ժամա-
նակվանից Պաշկեն ականել է մշտապես «նի-
սիա ոգտվել»... և յերբ հաստատվել է
այդ դերում, սովորություն է դարձրել իր
համար Նատաշայից վերցնել այն փողերը,
վոր ուրիշ հյուրերը առանձին տալիս են
յեղել նրան իբրև նվեր, հարբել այդ
փողերով և հետո գալ Նատաշային ծե-
ծել... Բայց այդ տեռ վոջինչ. նա սկսել էր
Նատաշի առաջ «բարձր փոխել», ուրիշ
աղջկերանց յետևից ընկնել...

— Դե տու ասա, սրտիս չե՞ր դիպչի

այդ... Ուրիշներինց յես ինչով եմ պա-
 րաս... Նշանակում ե յես նրա համար խա-
 ղալիք եյի, ծաղրի առարկա. ստոր արա-
 րած: Անցյալ ուր իրավունք վերցրի խաղ-
 յայկայից, վոր գնամ դբոսնելու. յեկա նրա
 մոտ, տեսնեմ Դուռնկեն հարբած— տրաք-
 ված նստած ե նրա սենյակում: Ինքն ել,
 իհարկե, հարբած եր: Ասում եմ՝ «այ ըս-
 տոր արարած,— ստոր խաբեբա...»: Նա
 վրա պրծավ ինձ ու սկսեց ծեծել. ի՛նչ մա-
 ղերից քաշ տալ հաստակի վրա, ի՛նչ վոտքե-
 րի տակ գցել, ջարդել... մի սաղ տեղ չը-
 թողեց... Յեվ այդ դեռ ելի վոչինչ, շո-
 րերս ամբողջովին պատառոտեց... Ահա
 նայիր սրանց: Հիմա յես վո՞ր քարովը
 տամ գլուխս, ի՞նչպես յերևամ խաղեյկին:
 Բոլորը պատառոտեց, շորերս ել, թիկնոցս
 ել... Բոլորովին նոր եր թիկնոցս. հինդ
 ուռքլի եյի տվել. գլխաշորս ել պոկեց...
 Ախ, աստված, հիմա յես ի՞նչ անեմ,—
 վայ տվեց նա հանկարծ վշտացած ու խեղդ-
 վող ձայնով:

Վայում եր նույնպես հետզհետե աստու-
 կացող քամին... Ատամներս ակեցին նո-

քից սրար գալ: Նա եւ կուչ եր գալիս ցըր-
տից և ալդեն աշնքան մոտեցել եր ինձ,
վոր յես կարողանում եյի մթության մեջ
տեսնել նրա փայլող աչքերը:

— Ինչ գարշելի բաներ եք բոլոր տղա-
մարդիկդ, — խոսեց նա նորից: — Վտարե-
րիս տակ կղցեյի ձեզ բոլորիդ... Վոր մե-
կը առաջիս սատկելիս լիներ ձեզանից, յե-
րեսին կթքեյի, ջեյի խղճա... կեղտոտ խո-
ղեր... Վնդատում եք, մնդատում, պոչ-
նեյդ ժաժ տալիս շան նման, և հենց վոր
ինձ արես մի անխելքը ձեռքներդ ընկնի,
պատրաստ եք իսկույն վռնատակ տալ...
դժուժ անատուններ...

Նրա հայհոյանքները շատ պես-պես ե-
յին, բայց ուժ չկար մեջները. վո՛չ բար-
կություն և վո՛չ ատելություն դեպի այդ
«դժուժ անատունները»: Ընդհանրապես նրա
խոսակցության սրունը շատ հանդիստ եր,
բոլորովին չեր համարպատասխանում ա-
սածների մտքի և շատ աղքատ եր ձայնի
յերևեցներով: Բայց և այնպես այդ ինձ վը-
րա ամելի յեր աղդում, քան մինչև այդ
ժամանակ իմ լսած բոլոր հոռետեսական

Ճառերն ու կարդացած գրքերը: Այդպես է.
մեռնողի մի ճիգը ավելի բնական է, ավելի
ուժեղ ու ցնցող, քան մահվան ամենա-
դեղատվետական ու ամենատուժիչ նկարա-
դրութիւնը:

Սիրտս շատ վատ էր. գուցե ավելի ցըր-
տից, քան թե հարեանուհու ճառերից:

Յես ակամայից մի ծանր ու յերկար տնջոց
արձակեցի ու աստամներս կրճատացրի:

Հենց նույն վայրկյանին յերկու սառը,
փոքրիկ ձեռք փաթաթվեցին ինձ, և յես
լսեցի մի քաղցր ու մեղմ կարեկցութեամբ
հնչող ձայն.

— Հը, ի՞նչ սխառահեց քեղ...

Յես պատրաստ էի յենթադրել, վոր
այդ հարցը տալիս է ինձ վոչ թե նստա-
շան, վորը մի բռնե առաջ բոլոր տղա-
մարդկանց դարձելի արարածներ հայտարա-
րեց ու այնքան հախոյեց բոլորին, — այլ
մի ուրիշը. բայց նա նորից սկսեց խոսել.
և այս անգամ ավելի շուտ-շուտ:

— Ի՞նչ վրա, հո չե՞ս մրսում. սառե՞լ
ես... այ անսլիտան, նստել ես ու լռել. ին-

չո՞ւ չեյիր ասում, վոր մըսում ես. դե
պառկիր, ձգվիր... յես ել կպառկեմ: Հա՛,
այսպես, հիմա գրկիր ինձ, լավ գրկիր:
Տեսնում ես, ինչ լավ բան ե. հետո մեջք
մեջքի կտանք, կպառկենք այսպես գիշերը
կանցնի... Յերևի գինու յես ամել գլու-
խը... Թե՞ տեղից դուրս են արել... Բան
չկա...

Նա ինձ մխիթարում էր, սիրտ եր տա-
լիս:

Ո՛հ, յերեցս նզովյալ լինեմ յես: Վորպի-
սի հեզնություն կյանքի կողմից: Յերևա-
կայեցեք, այդ ժամանակ յես ամենակուրջ
կերպով դբադված էյի մարդկության աղա-
ղայի խնդրով. յես յերազում էյի սոցիա-
լական բարենորոգումների, քաղաքական
հեղաշրջումների մասին. խորը-խմաստուն
գրքեր էյի կարդում, վորոնց մեջ հայտնած
մտքերը, թվում էր, չեն կարողանում լավ
լմբանել նույնիսկ իրենք հեղինակնե-
րը...

Յես պատրաստվում էյի մի «խոշոր ներ-
դրածող-հասարակական ուժ» դառնալ, և
ինձ թվում էր, վոր մասամբ արդեն հասել

Քամ իմ նապատափին: Համեմայն դեպք ասդ
Ժամանակները յես յերեւակայում եյի, վոր
յես մի բացառիկ իրավունք ունեմ ապրել
ու վորպես կյանքի համար մի անհրաժեշտ
մեծություն, վորպես պատմութիւն մեջ
խոշոր դեր կատարելու ու ընդունակ մի
մարդ...

Յեւ ինձ եր, վոր տաքացնում եր իր
մարմնով մի պատիւը ծախած կին, մի ան-
բախտ, ջարդւած-տրտւած ետեկ, վորը
վոչ տեղ ունի կյանքում, վոչ գին, և վորին
յես գլխի չընկա ոգնելու, այնինչ ինքը
ինձ ահա ոգնում եր... Իսկ յեթե գլխի
եւ ընկնեյի, հազիւ թե վարդանայի վո-
րեւեկերպ ոգնել նրան...

Ա՛խ, յես վուզեյի, վոր ասդ բոլորը
մի յերազ ընէր, մի անմիտ ու ծանր յե-
րազ...

Բայց, աւաղ... Անձրեւի ցուրտ կաթիլ-
ները շարունակում եյին թափւել ինձ վը-
րա. կուրծքս ձգած եր մի ուրիշ տաք
կրծքի, յերեսս շոյում եր նրա տաք շնչա-

ռությունը... թեև վոքը ինչ ողեշունչ,
բայց այնքան կենդանա՛նաւր...

Քամին մոռնում ու հեռւմ էր, անձրևը
ծեծում էր նախակի տախտակները, ալիք-
ները հեռւմ ու աղմկում էին: Մենք կայել
էինք միմյանց, բայց դարձյալ դողում է-
ինք ցրտից: Յե՛մ, այդ բոլորը իրականու-
թյուն էր:

Իսկ Նատաշան դեռ ինչ-մտք խոսում էր,
և այնպիսի քաղցր ու կարեկից ձայնով,
ինչպէս միայն կանայք կարող են խոսել:
Այդ դժվոր ու շոյող խաղերից կրճքիւ
տակ մի ինչ-մտք տաքություն առաջացաւ,
և այդ տաքությունից մի ծանր բան հալ-
վեց ու ընկաւ արտիս վրայից: Այդ ժամա-
նակ արտասուքի մի հեղեղ թափւեց իմ
աչքերից, վորը սրբեց-տաքաւ այն բոլոր
կեղտը, վիշտն ու չարությունը, վորով
լցւել էր արտա այդ գիշերաւ ընթաց-
քում...

Իսկ Նատաշան խոսում, համոզում էր
ինձ:

— Դե, բախակա՛ն է սիրելիս, ի՞նչքան
լաց լինես. բախակա՛ն է: Աստծով ամեն

բան կանցնի, կլավանաս, նոր գործ կը-
գտնես... Բոլորը կանցնի... — և շարունակ
համբուրում եր ինձ... համբուրում եր
անթիվ, անհամար ու ջերմ համբույրնե-
րով...

Այդ առաջին կանացի համբույրներն է-
յին, վոր մատուցանում եր ինձ կյանքը,
և, սկսեք ե ավելացնել, այդ ամենալավ
համբույրներն էյին իմ կյանքում, վորով-
հետև բոլոր մնացածները վոչինչ չէյին
տալիս իմ հոգուն, չնայած վոր շատ ու
շատ ավելի թանգ էյին նատում ինձ...

— Դե սուս, ասում եմ... Յես վաղը
քեզ համար մի տեղ կանեմ, գործ կձա-
րեմ... — կարծես յերազում լսում էյի նոր
քաղցր շշուկը:

... Մինչև լույս մենք այդպես գրկված,
պառկած էյինք: Իսկ, յերբ վոր լուսացավ,
դուրս յեկանք նավակի տակից և գնացինք
քաղաք... Հետո քաղեկամար քաժանոյե-
ցինք միմյանցից...

Նրանից հետո յես այլևս յերբեք չեմ
պատահել նատաչին, թեև ամբողջ մի
կես տարի փնտռել եմ նրան քաղաքի բոլոր

մութ խորշերում . . . Նրան, իմ անկման
նատաշին, վորի հետ յես անցկացրի նկատ-
րադրածս գիշերը մի անդամ աշնանը . . .

Յեթե նա մեռել է արդեն, վոր շատ լավ
կլիներ նրա համար— թող հանգչեն հան-
գիստ նրա վոսկորները. իսկ յեթե դեռ
կենդանի յե՝ խաղաղություն նրա տանջ-
վող հոգուն. և թող յերբեք նրա մեջ չարթ-
նանա իր անկման գիտակցությունը . . . վո-
րովհետեւ այդ կլիներ նրա համար մի նոր,
ավելորդ ու անարտուղ տանջանք . . .

1895

II. Հ Ե Ք Ի Ա Յ

Ամենագեղեցիկ հեքիաթը՝
կյանքի ստեղծած հեքիաթն է. —

ԱՆՈՐՐԱԵՆ

Գարուն էր : Պայծառ արևը շողշողում էր
ու բոլոր մարդիկ ուրախ էին . քարաշեն
հին տների ապակիներն անդամ ջերմագին
ժպտում էին :

Ամբոխը դուզված էր տոնական հա-
ղուստներով ու գույնզգույն հոսանք վաղ-
մած՝ անցնում էր փոքրիկ քաղաքի փողո-
ցով : Ամբողջ քաղաքն այստեղ էր , բան-
վորներ , դիմափորներ , բուրժուաներ ու քա-
հանաներ , աատիճանափորներ , ձկնորսներ
և ամենքը՝ բուրբուքված դարնան հրեղեն
շնչից — խոսում էին սովորականից ավելի ,
յերգում էին ու ծիծաղում : Ամբոխը ապ-
րելու խիղով յեռուն մարմնի յեր նման-
վում :

Աչքի էյին զարնում գույնզգույն հովա-
նոցներ, կանանց գլխարկներ: Յերեխաների
կարմիր ու կլապույտ գնդակները կարծես
կախարդական ծաղիկներ լինեյին: Կյանքի
զվարթ թագավոր՝ յերեխաները խնդում ե-
յին, ծիծաղում ու շողշողում հեքիաթային
արքայի շքեղ պատմութանի վրա շարած
գոհարների նման: Դեռ չծաղկած ծառերի
ախրուն կոկոնները աղահալքար ծծում էյին
արևի ջերմ շողերը: Հեռվում մուգիկան
հնչում էր ու կայնչում:

Այս պատկերն այն տալավորութունն էր
թողնում, վոր մարդիկ, կարծես, ապրել,
զաղատվել են իրենց առանձանքներից, վոր
յերեկվա ոլոր մեր ծանր, ամոթալի ու ա-
մենքինս զզվեցրած կյանքի վերջին որն է յե-
ղել, իսկ այսօր... այսօր ամենքը զարթ-
նել են քնից յերեխաների պես խնդաղեմ ու
ի հաստատուն և զվարթ հավատով դեպի
իրենց ուժերն ու անհաղթելի կամքը, վորի
առաջ ամեն ինչ պետք է գլուխ խոնարհի
և մարդիկ, ահա, համերաշխ ու վստահ՝
քայլում են դեպի ապագան:

Յեվ զարմանալի, վիրավորական ու ցա-

վալի թվաց, յերբ վենառնակ այդ ամբո-
խի մեջ մի տխուր դեմք յերևաց: Նա
բարձրահասակ ու ամբողջամ մի տղամարդ-
եր՝ բռնած իր ջահել կնոջ թևից: Հավա-
նորեն նրա տարիքը յերեսունից անց չեր,
բայց մաղերն արդեն ճերմակ էյին: Գլը-
խարկը նա բռնեյ եր ձեռքին. կլոր գլուխը
արծաթի պես սպիտակ եր, իսկ նիհար,
բայց առողջ դեմքը հանգիստ եր և մշտա-
պես թախծալից: Սոչոր ու թուխ աչքերը
պարուրված էյին թերթերունքներով ու
նայում էյին խոր հայացքով: Այդպիսի աչ-
քեր միայն այն մարդիկ են ունենում, վո-
րոնք դառն ցավ են ունեցել, այդ ցավը
մոռանալ չեն կարող ու յերբեք չեն մոռա-
նում:

— Ասրա նայիր այս զույգին, — ասաց
ինձ ընկերս, մանավանդ այդ տխուր տը-
ղամարդուն: Նա ունեցել է մի ծանր դրա-
մա: Այդպիսի դրամաներ այժմ հաճախ են
պատահում Հյուսիսային Իտալիայի բան-
վորների շրջանում:

Յեվ ընկերս ինձ պատմեց.

— Այդ մարդը սոցիալիստ է, տեղական

բանվորական լրագրի խմբագիրը, բանվոր
է, այսինքնով ներկարար: Նա այն մարդ-
կանցից է, վորոնց համար գիտությունը
դարձել է հավատ, իսկ այդ հավատը շա-
րունակ գրգռում է գիտության ծարավը:
Կատարի ու խելոք հակակշիւրական է. նա-
յիւր, սե տերտերներն ինչ սարսափելի աչ-
քերով են նայում նրա յետեից:

Հինգ տարի առաջ նա պրոպագանդիստ
եր. իր խմբակներից մեկում մի անգամ
նա պատահում է մի աղջկա, վորն իրեն
է յետ գրավում է նրա ուշադրությունը:
Այստեղ խալիստում, կանայք շատ են սո-
վոր լուռ ու անասան հավատի. քահանա-
ները յերկար ու ձիգ դարեր դարձացրել են
կանանց այդ ընդունակությունը և հասել
են իրենց նպատակին. — մեկը, չգիտեմ ով,
ճիշտ է ասել, վոր կաթոլիկ յեկեղեցին
կառուցված է կնոջ կրօնի վրա: Մադոննա-
յի (տիրամոր) կուլան ունի վոչ միայն կը-
ռապաշտական գեղեցկութուն, այլ նախ և
առաջ խելացի կուլտ է: Մադոննային ըզ-
դալն ավելի հեշտ է, քան Քրիստոսին:
Մադոննան մարդու սրտին ավելի մոտ է,

նա հակասություններ չունի, գեհենի կը-
քահով չի սպառնում: նա սիրառատ է, խըղ-
ճող ու ներող: կանանց սիրտը նա հեշտու-
թյամբ է վերջնականապես տերում:

Պրոպագանդիստը նկատում է, վոր աղ-
ջիկը գիտե խոսել, հարցեր տալ: Նրա
հարցերից յերևում էր, վոր նա անմեղ
վերապով հիացած է պրոպագանդիստի դա-
յափարներով, բայց ղեպի պրոպագանդիս-
տը տածում էր նաև անվստահություն,
հաճախ յերկյուղ ու մինչև անգամ զղվանք:

Խառաղիկան պրոպագանդիստները կրոնի
մասին շատ են խոսում, սուր քննադատում
պապին ու քահանաներին: Ամեն անգամ,
յերբ պրոպագանդիստն տկսում էր այդ
հարցերի մասին խոսել, աղջկա աչքերում
առաջանում էր զղվանք և ատելություն,
յերբ աղջիկը հարցնում էր վորևե բան,
նրա քրտերը հնչում էին թշնամաբար,
իսկ քաղցր ձայնը կարծես լցվում էր
թույնով:

Այստեղ կանանց վրա ավելի թեթև ու կո-
պիտ են նայում, քան Ռուսաստանում և,
պետք է ասել, վոր մինչև վերջին ժամա-

նապակներս իրենք խառնուհիներն եյին այդպիսի վերաբերմունքի առիթ տալիս. նրանք, բացի յեկեղեցուց, ուրիշ վոչ մի քանով չեյին հետաքրքրվում: Տղամարդկանց կուլտուրական աշխատանքին նրանք նայում եյին խորթ աչքով ու չեյին հատկանում այդ աշխատանքի նշանակութունը:

Պրոպագանդիստի առնական ինքնասիրութիւնը տանջվում էր, փայլուն քարոզչի հմայքն ամեն անգամ վիրասլորվում այդ աղջկա հետ ունեցած ընդհարումներէից. նա դայրանում էր, տրդում. մի քանի անգամ հաջող ծաղրում է նրան, բայց աղջիկն իր հերթին շեշտակի պատասխաններ էր տալիս, գրավում պրոպագանդիստի ահամա հարգանքը և անուղղակի կերպով ըստիպում, վոր նա ավելի լուրջ պատրաստվի այդ խմբակի պարսպամունքների համար:

Բայց պրոպագանդիստի աչքերէից չի վրժուում և այն, վոր ամեն անգամ յերբ ինքը խոսում էր մարդուն ճշող, նրա մարմինն ու հոգին աղտոլաղող քառամեկի իրականութեան մասին ու նկարում ապագա կյանքի պատկերը, ուր մարդը աղատ է լինելու,

Թե արտաքուստ և թե ներքուստ— այդ բո-
լեներին աղջիկը նրա աչքում այլ դեմքով
եր յերևում— նա լսում եր զորեղ ու խե-
ղճ մարդու զայրույթով, մարդու, վորին
ծանոթ և կյանքի շղթաների ծանրությու-
նը, լսում եր ծալում յերեխայի վստահու-
թյամբ— կարծես նրա աղանջին կախարդիչ
հեքիաթ եր հնչում և այդ հեքիաթը նրան
թվում եր վորպես դյուլթապան արձագանք
իր քարդ հոգու :

Պրոպագանդիստը հուզմունքով նախա-
դգում եր, վոր իր ուժեղ հակառակորդին
պետք և հաղթի, վոր այդ հակառակորդը
հրաշալի ընկեր կարող և լինել, ապագա
կյանքի համար Վեպոդ անվախ գինվոր :

Այդ մրցումը շարունակվում և գրեթե մի
ամբողջ տարի. քայքայ նրանք կարիք չեյին
զգում իրար մոտենալ և վիճել առանձին :

Վերջիվերջո նա մոտենում և աղջկան .

— Սինյորինա, մշտական ընդդիմա-
խոսս,—ասում և նա,—համաձայնեցեք, վոր
մեր գործի հաջողության համար լավ կլի-
ներ, յեթե մենք մոտիկ ծանոթանայինք :

Աղջիկն ուրախութեամբ ընդունում է նրա
առաջարկութիւնը ու համարյա առաջին
խոսքից սկսւում է նրանց պայքարը: Աղ-
ջիկը բոլորովա՞ծ պաշտպանում է յեկեղե-
ցին, վոքը, նրա առելով, միակ վայրն է,
ուր մարդ կարող է հոգեպէս հանդատա-
նալ, ուր բարի Մաղոննայի առաջ բոլոր
համարաւ էն ու միաշափ խղճալի, չնայած
իրենց հաղումաների տարբերութեան. իսկ
պրոպագանդիստը պատասխանում է, վոք
մարդկանց հարկամբ է վոչ թէ հանդատու-
թիւն, ալլ ինչով, վոք անկարելի չէ քա-
ղաքացիական համարութիւն ձեռք բե-
րել, առանց տնտեսական բարիքների հա-
վասար բաշխման և վոք Մաղոննայի թի-
կունքում կան թաղնա՞ծ մարդիկ, վոքոնց
համար ցանկալի չէ, վոք մարդիկ լինեն
թշվառ ու հիմար:

Նրանք կլանւում էին այդ վեճերով.
ամեն մի նոր հանդիպում շարունակութիւն
էր նույն անվերջ ու կրքոտ պայքարի և
որեցոր պարզւում էր նրանց համատարիք-
ների որհառական հակադրութիւնը:

Պրոպագանդիստի համոզմունքով կյանքը

Վրիպ է գիտությունն տարածելու, լինու-
թյան ուժերը գրավելու և նրա խորհրդա-
վոր եներգիան մարդու կամքին յենթար-
կելու համար. այդ վրիպը պահանջում է,
վոր յուր մարդիկ հավատար չափով լավ
զինվեն. իսկ վրիպ վերջում մարդուն ըս-
պասում է Մաքի աղատությունն ու հաղ-
թանակը, Մաքի՝ վոր բոլոր ուժերի մեջ
ամենահզորն է և միակը, վոր գործում է
գլխավորաբար:

Իսկ աղջկա հավատով՝ կյանքը դանդաղ
ու տանջալից ընթացք է, ուր մարդն իր
Միտքն անըմբռնելի խոնարհությամբ դռն
է բերում այն կամքին, վորի որենքներն ու
նպատակները միայն քահանան գիտե:

Պրոպագանդիստը չվարած հարցնում է.

— Վոր այդպես է, ել ինչո՞ւ յեք հաճա-
խում իմ գաղափարություններին, ի՞նչ եք
սպասում անցիակալումից:

— Այո՛, յես գիտեմ, վոր մեղք եմ գոր-
ծում և հակասում ինձ, — խոստովանում է
նա տխուր, — բայց սիրում եմ ձեզ լսել և

յերազել, վոր մարդկանց համար յերջանիկ
որեր են գալու:

Նա շատ ել գեղեցիկ չեր, բարակ ու խե-
լոք դեմք ուներ, խոշոր աչքեր. նրա հա-
յացքը և՛ հեղ եր ու զայրացկոտ, և՛ քրն-
քույշ ու դաժան. նա աշխատում եր մե-
տաքսի մանւարանում, ապրում եր ծեր մոր,
հաշմանդամ հոր և կրտսեր քրոջ հետ.
վերջինս սովորում եր արհեստավորաց
դպրոցում: Յերբեմն նա ուրախ եր լինում.
և նրա ուրախությունը վոչ թե աղաղակող,
այլ դրամիչ եր. նա ասիւում եր յերաժշտու-
թյուն ու հինավուրց յեկեղեցիներ. հիա-
նում եր նվառների և առարկաների գեղեց-
կությամբ:

Նայելով նրանց վրա՝ նա ասում եր.

— Ի՞նչ տարորինակ ե մտածել, վոր այս
գեղեցիկ առարկաները մի ժամանակ փակ-
ված են յեղել մասնավոր մարդկանց տնե-
րում և մեկ մարդ ե միայն իրավունք ու-
նեցել ուղտվել նրանցից: Գեղեցիկը պետք ե
տեսնեն բոլորը, գեղեցիկ կյանքը դրա մե-
ջն ե:

Հաճախ նա խոսում եր չափազանց առ-

բորինակ և պրոպագանդիստին թվում եր,
թե այդ բառերը թղխում են նրա հոգու
անխմանալի ճեղքերից. այդ բառերը վիրա-
վորի հառաչանքների եյին նման: Նա ըղ-
գում եր, վոր աղջիկը սիրում է վյանքն ու
մարդկանց խորը հուզմունքով ու կարեկ-
ցությամբ լի մի մոր սիրով. նա համբերու-
թյամբ սպասում եր, վոր իր հավատը կը-
բորբոքե աղջկան ու նրա լուռ սերը կվո-
խարինե կրքի: Նրան թվում եր, վոր աղ-
ջիկը հետզհետե տկսում է լսել իրեն ավելի
խոր ուշադրությամբ, վոր սրտումը նա ալ-
դեն համաձայն է իր հետ: Ու ել ավելի վո-
զեվորւմած՝ նա նորից տկսում եր խոսել
դրական, հարատև կուլի անհրաժեշտու-
թյան մասին, կուլի, վոր մղվում է հանուն
մարդու, ժողովրդի, մարդկության ազատա-
գրության հին շղթաներից, վորոնց ժանգը
հոգիների մեջ է թափանցել և մթաղնել,
թունավորել նրանց:

Մի անգամ աղջկան տուն՝ ճանապարհելու
ժամանակ, պրոպագանդիստն ասում է,
վոր սիրում է նրան և ցանկանում է նրա
հետ ամուսնանալ, ասում է ու սարսա-

փում իր առաջարկութեան թողած տպավորութիւնից։ Աղջիկը ցնցւում է՝ կարծես մի ծանր հարվածից . աչքերը լայն բացած, գունատաւի, նա հենւում է պատին, ձեռքերը թաղցնում ու պրոպագանդիստի յերեսին նայելով, ասում, համարյա թէ սարսափով .

— Յեա գուշակում, յեա զգում էի այդ վորովհետեւ ինքս վաղուց սիրում եմ ձեզ . բայց . . . Աստված իմ, այժմ ի՞նչ կլինի :

— Կսկսվեն մեր յերջանկութեան և ընդհանուր աշխատանքի որերը, բացակայում է նա :

— Վո՛չ, ասում է աղջիկը, գլուխը կախելով—, վո՛չ, սիրո մասին մենք չպիտի խոսենք :

— Ինչո՞ւ :

— Կհամաձայնե՞ս յեկեղեցում պապիկելու, — կամաց հարցնում է աղջիկը :

— Վոչ . . .

— Վո՞ր այդպէս է մնաք բարե :

Աղջիկը շտապ հեռանում է :

Պրոպագանդիստը վաղում է աղջկա յե-

տեղից ու ակսում համողել, նա լուռ լսում
է նրան, ապա ասում.

— Յես, իմ մայրն ու հայրս, համատա-
ցող մարդիկ ենք և այդպես ել կմեռնենք:
Գաղափարացիական ամուսնությունը, իմ
կարծիքով, ամուսնություն չէ: Այդ ա-
մուսնությունից ծնվածները, յես գիտեմ,
դժբախտ կլինեն: Միայն յեկեղեցական ա-
մուսնությունն է սրբազործում սերը, մի-
այն այն կարող է յերջանկություն և հան-
դիստ պարգևել ինձ...

Պրոպագանդիստը զգում է, վոր աղջիկը
չուտ չի գիշի, իսկ ինքը ի հարկե, գիշել
չեր կարող: Նրանք քաժանվում են: Վերջի
րոպեյին աղջիկն ասում է.

— Ինչո՞ւ յենք տանջում մեկ-մեկու, աշ-
խատիր չպատահել ինձ հետ:

— Վոչինչ չեմ խոստանում, պատասխա-
նում է պրոպագանդիստը:

Ու ավարտում է այդ յերկու ուժեղ մարդ-
կանց վեճիվը:

Ի հարկե, նրանք պատահում էին և ա-
վելի հաճախ, քան առաջ. տեսնվում էին,

վորովհետև սիրում, փնտռում էյին մեկ-
մեկու, հավատալով, վոր իրենցից մեկն,
անկարող այլևս, կզիջի ծարավ ու հետը-
հետե քորքոքվող զգացմանը: Այդ հանդի-
պումները լի էյին հուսահատությամբ և
վշտով. ամեն հանդիպումից հետո պրոպա-
գանդիստն իրեն զգում էր ջարդված և
ուժասարառ, իսկ աղջիկը, արցունքներն աչ-
քերին, յեկեղեցի յեր գնում խոստովանե-
լու:

Պրոպագանդիստը գիտեր այդ, ի հարկե
և զգում էր, վոր իր և աղջկա մեջ բարձ-
րանում է ֆալսաշավոր մարդկանց սև պա-
տը, վորը հետզհետե աճում է, ամրանում,
դառնում անկործանելի և իրենց ցմահ քա-
թանում:

Մի տոն ուր, դաշտում, քաղաքից դուրս,
նրանք դրոսնդամ էյին: Պրոպագանդիստը,
կարծես ինքն իրեն բարձրաձայն մտածե-
լով, անանց իշխանավորութուն ունենալու
նրան սպառնալու՝ ասում է.

— Գիտես, յերբեմն ինձ թվում է, թե
կարող եմ քեզ սպանել...

Աղջիկը չի խոսում:

— Լսեցի՞ր, ինչ ասացի...

Աղջիկը մի քնքուշ հայացք է գցում նրա վրա ու պատասխանում.

— Այո՛ :

Պրոպագանդիստը պարզ հասկացավ, վոր աղջիկը կմեռնի, քայց չի գիշի: Մինչ այդ «այո»-ն, նա յերբեմն գրկում ու համբուրում էր աղջկան, վորը գիմադրում էր նրան, քայց նրա համառությունը հետզհետե թուլանում էր: Պրոպագանդիստը արդեն յերազում էր այն մասին, վոր մի որ աղջիկը անձնատուր կլինի իրեն և հետո արդեն կանացի բնազդի ողնությամբ՝ կհաղթի նրան: Իսկ այժմ նա հասկացավ, վոր այդ հաղթություն չի լինի, այլ բռնադատումն, և այդ պահից նա դադարեց գրգռուել նրա մեջ կինը:

Այդպես նա քայլում էր աղջկա հետ նրա կյանքի պատկերացումների սև շրջանում, վառում էր նրա առաջ բաղմաթիվ ջահեր, քայց աղջիկը՝ յերազող ժպիտն աչքերին, լսում էր պրոպագանդիստին՝ ինչպես կույր ու վոչինչ չեր տեսնում, չեր հավատում նրան:

Մի անգամ աղջիկն ասում է .

— Յերբեմն յես հասկանում եմ, Վոր քո ասածները կիրականանան, բայց զգում եմ, Վոր այդ արտաջանում է իմ սիրուց դեպի քեզ, ըմբռնում եմ ասածներդ, բայց չեմ կարողանում համառատ. իսկ յերբ դու հեռանում ես— այն բոլորը, ինչ Վոր քոնն է, քեզ հետ հեռանում է :

Այդ դրաման տեղում է մոտ յերկու տարի : Բայց ահա աղջկա ուժերն աստավում են և նա հիվանդանում է : Պրոպագանդիստը թողնում է իր արհեստը, դադարում է պարապել մինչև անգամ կադմակերպության գործերով, պարտքի տակ երնկնում ու խուսափում ընկերներից : Ամբողջ օրերով նա թափառում էր աղջկա բնակարանի շուրջը—կամ նրա մահճակալի մոտ նստած նայում էր օրեցօր հալվող հիվանդին, Վորն արդեն թափանցիկ էր դարձել : Հիվանդության կրակը սլալում էր նրա աչքերում :

— Խոսիր թյանքի, աստղայի մասին,— խնդրում է աղջիկը :

Պրոպագանդիստը տկարում է խոսել ներ-
քայի մասին ու վրեժխնդրությամբ թվում
է այն բոլորը, ինչ տպանում են կյանքը—
ասում, վոր այդ բոլորի դեմ անդուլ կը-
ռիվ պետք է մղել ու կյանքից դուրս չը-
սրլրտել, ինչպես մութ, կեղտոտ ու մաշ-
ված փաշաներ:

Աղջիկը լսում էր նրան, բայց չէր ըզ-
գում էր, վոր ցավերը բորբոքվում են, նա
խնդրում էր, վոր լռի. չոյում էր նրա
ձեռքերն ու աղերասանից հայացքով նայում
նրա աչքերին:

— Յես մեռնո՞ւմ եմ, մի անգամ հարց-
րեց նա: Դրանից շատ ուրեք առաջ բժիշկն
արդեն ասել էր պրոպագանդիստին, վոր
աղջկա հիվանդությունը արագընթաց թո-
քախտ է և դրությունը անհուսալի:

Պրոպագանդիստը աչքերը կախեց ու չը-
սրտասխանեց:

— Գիտեմ, շուտով պիտի մեռնեմ, — ա-
սաց հիվանդը, — տուր ինձ ձեռքդ:

Յեվ յերբ նա ձեռքը մեկնեց, աղջիկը
կրակոտ շրթունքներով համբուրեց այն ու
ասաց.

— Ներիր, յես մեղավոր եմ քո առաջ,
յես սխալված եմ և դուք քեզ տանջել եմ:
Այժմ, յերբ արդեն սպանված եմ, տեսնում
եմ, վոր իմ համալսը միայն յերկրուղ եր
այն բոլորի հանդեպ, ինչ յես չեյի վարո-
ղանում հասկանալ, հակառակ իմ ցանկու-
թյան և քո թափած ջանքերին:

Այո՛, յերկրուղ եր այն, բայց, ավաղ
արյանս հետ խառնված. յես ծնվել եմ նրա
հետ միասին: Սեղքս իմն եռ վաճ քոնը—
բայց սիրտս ոտար եր. գիտեյի, վոր դու
իրավացի յես—բայց սիրտս չեք վարողա-
նում համաձայնել:

Մի քանի որից աղջիկը մեռնում է: Քը-
սանյոթ տարեկան պրոպագանդիստը իր
սիրելիի տաղնապի որերից դուրս յեկավ
ճերմակած մազերով:

Վերջին ժամանակներս նա ամուսնացել
է իր աշակերտուհու հետ, վորը այն աղջ-
կա միակ ընկերուհին եր:

Ամեն կիրակի նրանք գնում են գերեզ-
մանատուն՝ աղջկա գերեզմանի վրա ծա-
ղիկներ դնելու. այժմ էլ նրանք այնտեղ
են գնում:

Պրոպագանդիստը չի համարում իր հաղ-
թությանը. նա գիտե, վոր յերբ աղջիկն
ասաց—դու իրավացի ես՝ խաբում եր, վոր
իրեն միտիթարի:

Նրա կինն ել ե այդպէս կարծում: Նը-
րանք սիրով պաշտում են նրա հիշատակը:
Այդ գեղեցիկ՝ մարդու կորստյան տխուր
պատմութիւնը գրգռում ե նրանց ուժե-
րը, վոր վրեժխնդիր լինեն նրա համար.
աղջկա հիշատակը նրանց համերաշխ ու
անդուլ կովին տալիս ե ինքնատիպ ու
լայն, գեղեցիկ բնույթ:

Այսի տակ հոտում եր աշխույժ, տոնա-
կան ու քաղմբեղանգ մարդկանց գետը. ու-
րախ ռդմով կը ձգւում եր հոսանքին,
յերեխաները կ'էլէռւում եյին, ծիծաղում:
Ի հարկե, քուրոր մարդիկ անխռով ե ու-
րախ չեյին, համանորեն շատերի սրտերը
խառնար թախիծից ճնշւած եյին, շատերի
մտքերը հակառակութիւններէր տանջւած...
Բայց մենք քուրոր քայլում ենք դեպի ա-
ղատութիւն, դեպի աղատութիւն:

Լինենք համերաշխ—մեր ընթացքը կ'ա-
րագանա:

III. Հ Ե Ք Ի Ա Յ

Նեապոլ քաղաքում տրամալի ծառայողների գործադուլ էր: Բիւլիեր Քիեւ փողոցի ամբողջ յերկարութեամբ ձգված էր դատարկ վազոնների շղթա, իսկ Հաղթութեան հրապարակում խոնավ էր վազոնավարների ու կոնդուկտորների ամբուխը — միշտ ուրախ, աղմկաւարար և սնդիկի պէս դժուրաշարժ նեապոլցիների ամբուխը:

Նրանց գլխավերը, աչքու ցանկապատի մյուս կողմում շատրվանի բարակ շիթը փայլում էր սրի նման: Գործաթողները շրջապատված էին թշնամաբար տրամադրված բողմութեամբ, մարդիկ կարիք ունեյին գնալու ահագին քաղաքի զանազան կողմերը և ամենքը՝ գործակալատարներ, արհեստավորներ, խանութպաններ ու վարանող կահավաք — ամենքը զայրացած ու

դուրսուսուցումը նախատեսում է յին դործաթոշ-
ներին : Լսվում է յին ցատկոտ խոսքեր ,
ծաղրանք և ողի մեջ անընդհատ շարժվում
է յին նեապոլցու ձեռքերը , վորոնց միջո-
ցով նա խոսում է նույնքան արտասահյալիչ
ու պերճ , վորքան Վ իր անդադրում լեզ-
վով :

Ծովից մեղմ քամի յե փչում ու որո-
րում քաղաքային աջու արմավենիների
մուղ — կանաչ կատարները : Ձարմանք
բան . աջ արմավենիների բներն ամեհի
փղերի վրաների է յին նմանում ու Վարժես
քարից լինե յին տաշած : Նեապոլի փողոցի
կիսամերկ յերեխաները ճնճողուկի նման
թռչկոտում է յին ու ողը լցնում հնչուե
աղմուկ — ծիծաղով :

Վաղեմի լքանդակների նմանող (քաղաքն
աջ պահուն փողոցված էր Վիպիչ արևի ա-
ռառ ճառագայթներով ու յերդում էր , ա-
ռա հախարական յերգեհոն լիներ : Ծովա-
խորշի կապույտ ալիքները համերաշխ
զարնում է յին ամի քարերին ու իրու հար-
վածներով ճայնակցում ամբոխի աղմու-
կին , կարճես պահիրա յեր թնդում ,

Գործաթողները, չնկերով չըջապատված՝
 գաղթերի վռհմակի նման, հոգնած սեղմը-
 վել էյին մեկ-մեկու ու ամբոխի ապստամ-
 ւիքներին գրեթե չէյին պատասխանում, մի-
 այն նրանք յերբեմն-յերբեմն բարձրանում
 էյին աջուց ցանկապատի վրա ու մարդ-
 կանց գլուխների վրայից անհանդարտորեն
 նայում դեպի մոտակա փողոցները։ Ա-
 մենքի համար սարդ էր, վոր աջ միատա-
 յրազ մարդիկ կուռ միացած են իրենց ան-
 սառան փորոչումովն ու չեն դիջի։ Այդ
 հանդամանքն ամբոխին գրգռում էր ավե-
 լի ևս։ Բայց ամբոխի մեջ փիլիսոփաներ
 էլ վային, հանդարտորեն ծխելով՝ նրանք
 խրատում էյին գործաթողների տաքացած
 հակառակորդներին։

— Եյ, սինեոյր, ի՞նչ անեն խեղճ մար-
 դիկ, յերբ յերեխաների համար մակարոն
 անգամ գնելու փող չունեն։

Քաղաքային վոստիկանության օճնամուլ
 գործակալները յերկու-յերեք հոգուց վաղմ-
 ված խմբակներով հետեւում էյին, վոր
 ամբոխը կառքերի վերթեւեկությունը չը-
 խանդարի։ Նրանք խիստ չեղոքություն

եյին պահպանում ու համառար աչքով նա-
յում դատադարձողների վրա, յերբեմն ել
բարեհոգությամբ ծաղրում եյին, յերբ
նրանց աղմուկն ու ձեռքերի ջարժումները
տաքանում եյին չափազանց: Մտաւկա նեղ
փողոցի տների պատերի տակ շարված ե-
յին մի վաշտ կարաբիներնէր՝ զինված
կարճ ու թեթեւ հրացաններով: Նրանք
դրված եյին լուրջ ընդհարումների առաջն
առնելու համար: Այդ զինվորները բավա-
կան շարադուռակ տեսք ունեյին: Նրանք
ծածկած եյին յեռանկյունի գլխարկներ ե
հագած կարճ ու սև պատմուճաններ, իսկ
բրյուկների կարմիր լամպաները փայլում
եյին արյան պես:

Փոխադարձ հայհոյանքները, ծաղրը,
կշտամբանքներն ու հորդորանքը հանկարծ
դադարեցին. ամբոխի վրայից անցավ մի
նոր, մարդկանց հաշտեցնող հոսանք: Գոր-
ծաթողների դեմքերը մռայլվեցին ավելի
ևս: Նրանք տեղմվեցին մեկ-մեկու: Իսկ
ամբոխի միջից լավեցին ձալներ:

— Զինվորները...

Գործաթողների դեմ բարձրացան ծաղր

ու հաղթանակ արատահայտող սուշոցներ ,
 և՛ վողջույնի ձայներ՝ զինվորներին հաւցե-
 յին . իսկ մեկը՝ քարակ , մոխրադույն հա-
 զուստով ու պանամա ծածկած մի դեր
 մարդ , մոտները դանդաղ-դանդաղ շարժե-
 լով սկսեց պարել մայթի վրա : Մասլէ կոն-
 ղուկոտորներն ու վազոնավարները ճեղքելով
 ամբոխը՝ մոտեցան վազոններին . նրանցից
 մի քանի հոգի բարձրացան վազոնները և ի-
 րենց տեղերը բռնեցին : Սուժանի սպառ-
 նալիքներին նրանք պատասխանում էին
 ծանր Վշտամբանքներով ու տիպում , վոր
 համբա տան անցնելու : Աղմուկը մի քիչ
 դադարեց : Գործաթողներն անցնելով ամ-
 բոխի միջից՝ պատասխանեցին , խմբակներին
 լրախանցին թշնամարաւր տրամադրւած
 այդ բանակը ու կարծես վարակեցին մի նոր
 տրամադրութեամբ , մարդկային , վո՛չ —
 թշնամակա՛ն տրամադրութեամբ :

Իսկ Սանտա-Լյուչիայի ծովափից մո-
 տենում էին ցածրահասակ ու մոխրա-
 դույն զինվորները : Նրանք դալիս էին
 թեթե ու պարտղ քայլերով , համալսալի
 խփում էին վոտներն ու միատեսակ , մե-

քենայարար շարժում ձախ ձեռքերը : Ձին—
վորները կարծես թիթեղյա լինեյին ու
փխրուն էյին , վորպես լարվող խաղալիք—
ներ : Գեղեցիկ ու քարձրահասակ մի սպա՝
հոնքերը կխառն ու գեմքն արեւությամբ
ծամածուած՝ գեկավարում էր գինավորներին :
Նրա մոտից վառավոստալով — քայլում էր
ցիլինդրավոր մի գեր մարդ ձեռքերն ողի
մեջ արագ—արագ շարժելով՝ նա ինչ վայր
բան էր առնում սպային :

Ամբոխը յետ քաշվեց վազոններից . գին—
վորները փռու պես ցրվեցին ու շարվե—
ցին վազոնների մոտ . իսկ դործաթողները
կանգնած էյին վազոնների մեջ : Յիլինդր—
րավոր գեր մարդը և նրա շուրջը համարք—
ված մի քանի ուրիշները ձեռքերը թափա—
հարելով բարկացած աղաղակում էյին .

— Վերջին ահգամ առաջարկում եմ , լը—
սո՞ւմ եք :

Սպան ձանձրույթից գլուխը թեքել էր
ու բեղերն էր փոխրում : Նրան մոտեցավ
մի մարդ , ցիլինդրը բարձր հանեց ու խլո—
ստա ձայնով ինչ վոր բան ասաց : Սպան
ծուռ հայացք ձգեց նրա վրա , ուղղվեց ,

Վործքը դուրս ցցեց ու բարձր հնչեցին
հրամանի բառերը:

Այդ ժամանակ յերկու-յերեք զինվոր
հարձակվեցին յուրաքանչյուր վազոնի վրա
ու ալիսեցին ցած նետել դործաթողներին:

Ամբոխին այդ ծիծաղելի թվաց. լսվեցին
աղաղակ, աուլոցներ, հրհռոց, բայց այդ
քոլորը շուտով դադարեց. և մարդիկ լուռ,
վաղաժամ ծերացած դեմքերը դուրս ցցած
ու աչքերը դարձանքից չռած՝ ծանր-ծանր
յետ քաշվեցին վազոններից ու ամբողջ
մասսայով շարժվեցին դեպի առաջին վա-
զոնը:

Յեւ տեսան, վոր վազոնի անիվների ա-
ռաջ ուղիների վրա պառկել և մի վազոնա-
վար: Ձինվորի դեմք ունեւ նա. գլխ-
խարկը հանած ալիվոր գլխից, նա պառ-
կած երկուրձքը դեպի վեր, իսկ բեղերը
խրոխտ վերադով դեպի յերկինք և յին ցցվեւ:
Նրա մոտ գետնին սիւվեց մի ուրիշը, վոր-
րիկ կտակի նման ճարպիկ մի յերիտա-
սարդ: Ապա մեկը մյուսի յետեւից անըշ-
տապ կերպով ալիսեցին դետին թափվել և
ուրիշները:

Ամբոխը խուլ աղմկում էր, յերկշոտները
Մազոննայի (տիրամոր) ողնությունն էյի
հայցում. վամանք մռայլ հայհոյում, ծը-
ղըրտում էյին, կանայք հառաչում: Տե-
սարանիցը զայրացած փողոցի տղաները
աջ ու ձախ վռտովոստում էյին ռեռինե
պնդակներէ նման:

Յիւլիէրաւոր մարդը արտասուէնքն աչ-
քերին ինչ վոր բան էր աղաղակում, սպան
նայեց նրա վրա և ուտերը վեր քաշեց. նա
իրավունք ուներ վազոնաւարներէ փոխա-
րեն զինվորներ վազոնները քշելու հա-
մար, բայց գործաթողերի դեմ կամելու
հրաման չէր ստացել:

Այն ժամանակից յիւլիէրաւորը՝ շրջա-
պատւած մի քանի հաճոյակատառ մարդ-
կանցով, վազեց դեպի կարաբիներնէրի կող-
մը. կարաբիներնէրն ահա շարժվեցին, մո-
տենում են, կռացան ռեւերին պատկած-
ների վրա և նրանց բարձրացնել են ու-
ղում:

Սկսվեց կռիւ, իրարանցում, բայց ահա,
այդ տեսարանը հեռվից դիտող մոխրա-
գուն ու փոշոտ ամբոխը շարժվեց, վոո-

նայց, մոնչյուն արձակեց, ու գրոհ տալով
դեպի ուելսերը. պանամա ծածկած մարդը
գլխարկը հանեց, շարտեց ողի մեջ ու ա-
ռաջինը պառկեց մի գործաթողի մոտ,
կամացուկ խփեց նրա մեջքին ու բարձր
աղաղակելով սկսեց խրախուսել:

Նրա յետեւից ուելսերի վրա ականջին
թափվել ուրիշները. բոլոր վոտները կար-
ծես մեկեն կտրվեցին: Այդ աշխույժ ու
աղմկալից մարդիկ, վոր յերկու բոպե ա-
ռաջ լուռ դիտող էին միայն, այժմ ու-
րախ — ուրախ գետին էյին թափվում,
մեկ-մեկու դեմ բերան ծռում ու գոռում
դեպի սպան, վորը ձեռնոցները շարժելով
ցիլինդրով մարդու քիւ առաջ, խոսում եր
ինչ վոր բանի մասին, քմծիծաղ տալիս ու
պեղեցիկ գլուխն ուրորում:

Իսկ ուելսերի վրա մարդիկ դեռ թափ-
վում էին ու թափվում. կանայք իրենց
զամբյուղներն ու կապոցներն էյին շարը-
տում, յերեխաները ծիծաղելով պառկում
էյին ու սառած շնորի նման կալաչաձև
կուշ գալիս. վայելուչ հագնված մարդիկ

ընկնում էյին այս ու այն կողքի վրա ու
փոշոտովում :

Առաջին վազոնից հինգ զինվոր նայում
էյին ներքե անխիւնէրի առաջ թափված
մարմինների կույտերի վրա և հրհռում ,
որոյովում էյին՝ վազոնի ճաղերից քնած .
Ծիծաղելու ժամանակ նրանք յետ ու առաջ
էյին ձգում դուխները . այժմ նրանք բո-
լորովին նման չէյին թիթեղյա լարվող խա-
ղալիքների :

...Կես ժամից հետո ամբողջ Նեապո-
լում ճիչ ու ճրճուոց քարձրացած սլանում
էյին տրամախի վազոնները՝ հաղթական
չործաթողներն ուրախ ու ժպտուն դեմ-
քով կանգնած էյին իրենց տեղերում :

Վազոնի մեջ քայլելով նրանք քաղաքա-
վարի կերպով հարցնում էյին :

— Ձեր տոմսակը...

Մարդիկ ցույց էյին տալիս կարմիր ու
դեղին թղթիկներ . աչքով էյին անում ,
ժպտում , քարեհոգի կերպով փնթփրն-
թում... :

IV. Հ Ե Ք Ի Ա Յ

Հին, հաստաքուն խաղողենիների մեջ
թաղնված վաճառատան դռների առաջ,
խաղողաթուփերի, շերեփուկի յեւ չինա-
կան մանր վարդերի ցանցապատ ծածկոցի
հովանու տակ, սեղանի մոտ, գինու շիշը
առաջներին, նստած էին Վինչենցո ներ-
կարարը յեւ Ջիովաննի վաղանատուրծը:
Ներկարարը փոքրիկ էր, վռակրոտ ու սեւ,
նրա թուխ աչքերում վառլում էր յերազո-
ղի մտածկոտ ու մեղմ ժպիտը: Թեև նրա
վերին շրթունքը յեւ այտերը սափրվելուց
կապտել էին — այդ ժպիտը նրա դեմքին
տալիս էր մանկական ու միամիտ արտա-
հայտութուն: Բերանը փոքրիկ էր, կանա-
ցի բերանի նման յեւ ձեռքի զառստակները
յերկայն: Նա իր աշխույթ մատներով խա-
ղացնում էր վարդի գեղեցիկ ծաղիկը յեւ

սեղմելով այն իր շրթունքներին, փակում
էր աչքերը:

— Կարող ե պատահել, — յետ չգիտեմ—
կարող ե պատահել, — հանդարտ ասում
էր նա, շարժելով քունքերի մոտ սեղմված
գլուխը, վորից շիկագույն գանգուրները
թափվում էին նրա բարձր ճակատին:

— Այո', այո', քանի դեպի հյուսիս,
այնքան հաստատակամ են մարդիկ—պըն-
դում էր մեծագլուխ, լայնաթիկունք, սեվ
գանգուրներով Զիովանին. նրա դեմքը
պղնձագույն էր, քիթն արևառ և ծածկի-
ված թափվող մորթու ապիտակ թեփերով,
աչքերը մեծ էին ու բարի, յեղան աչքե-
րի պես ու ձախ ձեռքին պակկատում էր մեծ
մատր:

Նրա զրույցը դանդաղ էր, վորպես իր
յուզակալած և յերկաթե փոշով ծածկված
ձեռքերի շարժումները: Գինու բաժակը իր
կոտրտված յեղունգներով մատների մեջ
սեղմած, նա շարունակում էր իր հաստ
ձայնով:

— Միլան, Թուրին — ահա այն դերա-
դանց գործարանները, վորտեղ ձեվակերպ-

վում էն նոր մարդիկ, աճում է նոր միտ-
քը: Մի փոքր էլ սպասիր — աշխարհը կը-
խելոքանա ու կաղնավանա:

— Այո՛, — ասում է փոքրիկ ներկարարը,
բարձրացնելով թափակը և գինու մեջ մոր-
սալով արեւի ճառագայթը — յերգում է՝

— Ո՛հ, ինչ ջերմ է յերկիրը մեր որերի
առավոտին,

Բայց — առնացել ենք մենք — և ցուրտ
է նրա վրա

— Վորքան դեպի հյուսիս, ասում եմ
յես, այնքան լավ է գործը: Այ հենց Փը-
րանսիացիք այնպես ծույլ չեն ապրում,
վոխարես մենք, այնուհետեւ գերմանացիք
և վերջապես ռուսները — ա՛յ քեզ մարդիկ:

— Իրավագուրկ, աղատուխյունից յեւ
կյանքից դրկվելու յերկյուղից, նրանք հըս-
կայական գործ կատարեցին. չե՞ մոր նրանց
չնորհիվ եր, վոր արթնացավ նոր կյանքի
համար վողջ արեւելքը:

— Հերոսների աշխա՛րհ — գլուխը թա-
փահարելով ասաց ներկարարը — յես կու-
ղեյի նրանց հետ ապրել...

— Դո՛ւ — բացական չեց փականագործը,

ձեռքը ծնկանը դարկելով, — մի շաբաթից
հետո սատուցի մի կտոր դարձած վրինեյի
դու այնտեղ :

Յերկուսն ել բարեհաղությամբ ծիծաղե-
ցին :

Նրանց շուրջը փռված էին կապույտ և
վոսկեգույն ծաղիկները . ողի մեջ դողդո-
ջում էին արևի ճառագայթների ժապա-
վենները , թափանցիկ ամանի ու բաժակ-
ների մեջ վառվում էր ալմանդինի գինին ,
հեռվից լողալով մոտենում էր ծովի մե-
տաքսյա խռոցը :

— Իմ բարի վինչենցո , — ասաց փակա-
նադործը լայն ժպտալով — ա՛յ դու բա-
նաստեղծորեն պատմիր , թե ինչպես յե՛ս
սոցիալիստ դարձա — դու գիտե՞ս այդ :

— Վո՛չ , — ասաց ներկարարը բաժակնե-
րը լցնելով և կարծես ժպտալով կարմիր
հեղուկին — դու յերբեք չես պատմել հնձ :
Այդ մորթին այնքան սաղում է քո վոս-
կորներին , Վոր յես կարծում էյի , թե դու
դրա մեջ ել ծնվել ես :

— Յես ծնվել եմ մերկ ու հիմար , ինչ-
պես և դու ու բոլոր մարդիկ : Պատանի

Հաստակութեամբ յետ յերազում եյի հարուստ կը-
նոջ մասին, զինվոր ժամանակս պատ-
րաստութեամբ եյի քննութեան՝ ապայի աստի-
ճան ստանալու համար: Այնուհետեւ քը-
սաներեք տարեկան եյի, յերբ զգացի,
վոր աշխարհիս յերեսին ամեն ինչ այնքան
ել լավ չե և հիմար մնալը — ամոթ է:

Ներկարարը հենվեց սեղանին և գլուխը
վեր բարձրացնելով, ակսեց նայել դեպի
մոտակա սարը, վորի հենց դադաթին
կանգնած որորովում եյին վիթխարի յե-
ղեգները:

— Մեզ, մեր վաշտը ուղարկեցին Բոլո-
նիա, — այնտեղի գյուղացիները ապրս-
տամբվել եյին՝ պահանջելով վոմանք կա-
պալազնի կրճատում, մյուսները գոռում
եյին աշխատավարձի ավելացման մասին:
Ինձ թվում եր թե մեկը և թե մյուս-
ները անիրավացի եյին: Ինչ հիմարու-
թյուն — մտածում եյի յետ: Ձե վոր դա
կքայքայեր հողատերերին: Ինձ, քաղաքիս
քնակչին այդ բանը անմիտ ու անհեթեթ
եր թվում: Յետ շատ եյի բարկանում, վո-
րին նպաստում եր շողը, մշտակյան տեղա-

փոխութիւնները մի տեղից մյուսը և ան-
դամար) զիջեցրապահութիւնները : Այդ-
քաջերը, հասկանում ես, կոտորատում էին
կաթմածատերերի մեքենաները, նաև շատ
սիրում էին այրել հացը և վռնչացնել
այն ամենը, ինչ վոր իրենց չէր սխալմա-
նում :

Նա փոքրիկ կոմերով խմեց գինին և ա-
վելի կենդանացած, շարունակեց :

— Նրանք մեծ խմբերով շրջում էին
դաշտերում, վորպէս վռչխարներ, բայց
լուռ, գոռոզ և բանիմաց : Մենք նրանց
ցրում էինք, ցույց տալով մեր սփիւնե-
րը ու յերբեմն ել հրելով նրանց հրացանի
կոթերով : Նրանք ցրվում էին առանց
վախենալու և առանց շտապելու ու հետո
կրկին հավաքվում : Այդ թուրը տաղտկա-
լի յեր վորպէս յերկար ժամերգութիւնը
ու կրկնվում էր որ որի վրա, տենդի նը-
ման : Լուստոն— մեր յենթասպան, մի
շատ լավ յերիտասարդ, ինքը գյուղացի—
հետզհետե մոայլվում էր. նա դեղնել էր,
նիհարել և շատ անգամ ասում էր մեզ .

— Շատ վատ է, վորդիքս, շատ վատ է,

յերևի ստիպմամբ կլինենք հրազեն պարպել,
անխնայաբար լինեմ յես:

Այդ վերակրօնը, ի հարկե, մեզ ամե-
լի յեր վրդովում: Բայցի այդ, տես վոր,
ամեն մի անկյունում, ամեն մի բլուրի ու
ծառի հետևից տնկված եյին դյուղացիներ-
ի համար գլուխները. նրանց բարկացած
աչքերը մեզ եյին վորսում: Նրանք ի հար-
կե այնքան ել սիրալիր չեյին տրամադրու-
մամբ գետի մեզ:

— Խմի՛ր, — առաջ փոքրիկ վինչենցոն,
գինու համալիր լիալար շարար մոտեցնե-
լով իր բարեկամին:

— Շնորհակալ եմ. կեցցեն տոկուն մար-
դիկ, — իր հաստ ձայնով բացականչեց փա-
վանագործը, իմեց ու ձեռքի ափով մաք-
րելով բեխերը, շարունակեց:

— Մի անգամ յես մի բլուրի վրա, ձի-
թենու պուրակի մոտ կանգնած, պահարա-
նում եյի ծառերը — վորովհետև դյուղա-
ցիները փչացնում եյին նրանց, իսկ բլու-
րի ներքևում աշխատում եյին յերկու
դյուղացի՝ մի ծերուկ և մի պատանի.
Կնչ վոր առու եյին փորում: Շոգ եր,

արեւը կրօնակի նման աչրում եր: Ինձ պա-
տել եր ձուկ դառնալու ցանկությունը.
տաղտկալի յեր և յես, հիշում եմ, նայում
եյի այդ դյուղացիներին շատ քարկացած:
Կեսորին նրանք ձգելով աշխատանքը, հա-
նեցին հաց, պանիր և գինու լիտժը: Գրո-
ղը տանի ձեզ— մտածում էյի յես: Հան-
կարծ ծերուկը, վոր մինչև այդ վոչ մի
անգամ չեր նայել ինձ վրա, ինչ վոր բան
առաջ պատահուէ: Պատանին քաղաքաւոր
Ժողովահարեց գլուխը, բայց ծերուկը գո-
ւաւց.

— Գնա', — շատ խիստ գոռաց:

Պատանին գինու լիտժը ձեռքին մոտեցաւ.
ինձ և, վոչ այնքան ել հոժարակամ ա-
սաց.

— Հայրս կարծում ե, վոր դուք խմելու
ցանկություն ունեք և առաջարկում ե ձեզ
գինի:

Անհարմար եր, թեև դուրեկան, յես հը-
րաժարուեցի և գլխի շարժումով շնորհա-
կալություն հայտնեցի ծերունուն, բայց

յերևի տախտակած կլինենք հրազեն պարպել ,
անխճոված լինեմ յես :

Այդ վրակլրունցը , ի հարկե , մեզ ամե-
լի յեր վրդովում : Բայց ի այդ , տես վոր ,
ամեն մի անկյունում , ամեն մի բլուրի ու
ծառի հետեից անկոված էյին գլուղացիներ-
ի համար գլուխները : նրանց բարկացած
աչքերը մեզ էյին վորում : նրանք ի հար-
կե այնքան ել սիրտիւր էյին տրամադրու-
ված գետի մեզ :

— Խմի՛ր , — առայ փոքրիկ Վինչենցոն ,
գլխու համալիր խաղաղչարար մտեցնե-
լով իր լարեկամին :

— Շնորհակալ եմ , կեցցեն տեղուն մար-
դիկ , — իր հաստ ձայնով քացականչեց փա-
կանագործը , խմեց ու ձեռքի սփով մաք-
րելով բեխերը , շարունակեց :

— Մի անգամ յես մի բլուրի վրա , ձի-
թենու պուրակի մոտ կանգնած , պահարա-
նում էյի ծառերը — վորովհետեւ գլուղա-
ցիները փչացնում էյին նրանց , իսկ բլու-
րի ներքեում աշխատում էյին յերկու
գլուղացի՝ մի ծերակ և մի պատանի :
Ինչ վոր առու էյին փորում : Շուր եր ,

արեւը կրտսերի նման ալրոււմ եր: Ինձ պա-
տել եր ձուլի դառնալու ցանկությունը .
տաղտկարի յեր և յեռ, հիշում եմ, նայում
եյի աջդ գլուխացիներին շատ քարկացած:
Կեսորին նրանք ձգելով աշխատանքը, հա-
նեցին հաց, պանիր և գինու կուժը: Գրո-
ղը տանի ձեզ— մտածում էլի յեռ: Հան-
կարծ ծերուկը, վոր մինչև աջդ վոչ մի
անգամ չեր նայել ինձ վրա, ինչ վոր բան
առաջ պատանու: Պատանին քաղաքաբար
թափառհարեց գլուխը, բայց ծերուկը գո-
ւալ .

— Գնա՛, — շատ խիտ գոռաց:

Պատանին գինու կուժը ձեռքին մոտեցաւ
ինձ և, վոչ այնքան ել հոժարակամ ա-
սաց .

— Հայրս կարծում ե, վոր դուք խմելու
ցանկություն ունեք և առաջարկում ե ձեզ
գինի:

Անհարմար եր, թեև դուրեկան, յեռ հը-
րածարակցի և գլխի շարժումով շնորհա-
կալություն հայտնեցի ծերունուն, բայց

ծերունին յերկնքին նայելով, խառնախա-
նեց .

— Խմեցեք, պարոն, խմեցեք : Մենք ա-
ռաջարկում ենք այդ իբրեւ մարդու և մոչ
զինովորի ու հոգս չունենք, մեր զինովորը
մեր զինուց ավելի քարի կդառնա :

— Մի խայթիր, գրողը տանի քեզ, մը-
տածեցի յես և յերեք կում խմելով, շնոր-
հակալություն հայտնեցի, իսկ այնտեղ
ներքեւում նրանք սկսեցին ուտել : Շուտով
ինձ փոխարինեց տալերտինացի Ուզոն և
յես նրան կամաց ատացի, մեր այդ յերկու
զյուզացիները քարի մարդիկ են : Նույն
որը, յերեկոյան, յերբ յես կանգնած եյի
մեքենաների սրահի դռան առաջ, կտու-
րից մի աղյուս ընկաւ գլխիս . այնքան ել
չցավեցրեց, քայց յերկրորդ աղյուսը այն-
պիսի թափով գիպաւ ուսիս, մեր ձախ
թես թուլացաւ :

Փականադործը քերանը լայն քացելով
ու ~~աչքերը~~ կկոցելով քարձր ծիծաղեց :

— Աղյուսները, քարերն ու փայտերը—
չարունակեց նա ծիծաղելով— այն որերին
այնտեղ դործում եյին Վնքնուրույնաբար

և պետք է ասել, վոր անշուշտ առարկա-
ների այդ ինքնուրույնությունից, բախ-
կան մեծ մեծ ուռույցքներ էյին առաջա-
նում մեր գլուխների վրա: Ահա կանգնած
է, կամ քայլում է գինովորը. մեկ էլ փայ-
տի մի կտոր, կարծես գետնից բուսելով
դիպչում է նրան, կամ ասես յերկնքից մի
քարի ձևոր ընկնում է նրա գլխին: Մենք
ի հարկէ աստիկ բարկանում էյինք:

Փոքրիկ ներկարարի աչքերը թախիժով
լցվել էյին, դեմքը գունատվել էր, ու նա
մեղմ սասց:

— Միշտ այդպիսի ժաներ լսելիս, մարդ
ամաչում է...

— Ի՞նչ կարող ես ասել, մարդիկ դան-
դաղությամբ են խելոքանում: Հետո, յես
սղնություն կանչեցի, ինձ տարան մի
տուն, վորտեղ պառկած էր յերեսը քարից
վիրավորված մի գինովոր: Յերբ յես հարց-
րի թե ինչպես է այդ պատահել, նա տր-
խուր ծիծաղով պատասխանեց.

— Պառավը, ընկեր, պառավը. այն ծեր
վհուկը քարով զարկեց յերեսիս և առա-
ջարկեց իրան տպանել:

— Ձերբակալեցի՞ն :

— Յեա առաջի, վոր ինքս եմ վայր ընկ-
նելով վիրավորվել : Հրամանատարը չհա-
վատաց — այդ նկատվում եր նրա աչքե-
րից, բայց համաձայնվիր, վոր անհարմար
եր խոստովանվել թե վիրավորվել ես մի
պատվից : Սատանան տանի, ի հարկե նը-
րանց դրությունը դժվար ե— և հատկա-
նալի յե, վոր նրանք մեզ չեն սիրում :

— Այդ ճիշտ ե, մտածում եյի յես :
Յեկով բժիշկը յերկու կանանց հետ, նը-
րանցից մեկը շատ գեղեցիկ եր, շիկահեր,
ինչպես յերևում եր վեներիկցի յեր,
մյուսը — չեմ հիշում : Նայեցին ձեռքս,
ի հարկե դատարկ լան իր, Վոմպրես դռե-
ցին ու դնացին :

Փականադործը մռայլվեց, լռեց և ա-
մուր շփեց ձեռքերը : Նրա ընկերը նորից
լցրեց բաժակները բարձր պահելով շիշը և
գինու կարմիր և աշխույժ շիթը թռթռաց-
նելով ողի մեջ :

— Մենք յերկրուս ել նստեցինք պատու-
հանի մոտ — մռայլ շարունակեց վաղանա-

գործը— նստեցինք այնպես, վոր մեզ չը-
տեսնի արևը և ահա լսում ենք այն շիկա-
հեր գեղեցիկուհու քնքույշ ձայնը— նա ըն-
կերուհու և բժշկի հետ անցնում եր այդույ
պատուհանի մոտով և խոսում Փրանսերեն
լեզվով, վորը յես լսով հասկանում եմ :

— Դուք նկատեցի՞ք նրա աչքերը— ա-
սում եր նա— նա ել, ի հարկե նույնպես
գյուղացի յե և կարող ե պատահել, վոր
զինադրեաւը հանելուց հետո նա ել առ-
ցիալիստ կղաւոնա, ինչպես մեր բոլոր
գյուղացիները : Յեւ ահա այդպիսի աչքե-
րով մարդիկ ցանկանում են տիրել ամ-
բողջ աշխարհը, վերափոխել ամբողջ կյան-
քը, արտաքսել մեզ, վռնջացնել և այդ
ամենը միմիայն նրա համար, վորպեսզի
հաղթանակե ինչ վոր մի կույր, տաղտկա-
լի արդարություն :

— Հիմար յերեխաներ— ասաց բժիշկը—
կիտայերեխաներ, կիտաղաղաններ :

— Գաղաններ— այո, թայց ի՞նչն ե նը-
րանց մեջ յերեխայակալն :

— Հապա այդ յերազները՝ ընդհանուր
հավատարության մտաին :

— Ո՛ր, ինչպես չե, յես հավատար Էմ
այդ յեղան աչքերով տղային, կամ այն
մյուսին՝ թռչունի դեմքով, մենք բոլորս,
դուք, յես և սա հավատար ենք այդ սև ա-
րյուն լուսեցող մարդկանց: Մարդկանց,
վորոնց կարելի չե հրավիրել միմիայն նրա
համար, վորպեսզի ջարդեն իրանց նման
պաղաններին:

Նա շատ եր խոսում և տաք տաք. իսկ
յես լսում եյի և մտածում.

— Այդպե՞ս, տիկին: Յես նրան առաջին
անգամը չեր, վոր տեսնում եյի և դու
գիտես, անշուշտ, վոր վոչ վոք այնպես
ջերմ չե յերազում կնոջ մասին, վորքան
դինվորը: Հասկանալի չե, վոր յես նրան
յերևակայում եյի բարի, խելոք, լավ
սրտի տեր և բացի դրանից այն ժամանակ
ինձ թվում եր թե ազնվականները մի ա-
ռանձին խելքի տեր են: Հարցնում եմ ըն-
կերոջս:

— Դու հասկանո՞ւմ ես այդ լեզուն:

Վո՛չ, նա չեր հասկանում: Այն ժամանակ
յես թարգմանեցի նրան չիկահեր տիկնոջ
խոսքերը— նա բարկացավ, վեր-վեր ցատ-

կեց, փայլեցրեց մեկ աչքը—մյուսը կապած
էր :

— Ահա թե ի՞նչ— փնթփնթում էր
նա— ահա թե ի՞նչ, նա ինձնից ոգտվում
է և միևնույն ժամանակ ինձ մարդ չի հա-
մարում : Յես նրա պատճառով թույլ եմ
տալիս անպատվել իմ արժանապատիւ-
թյունը, իսկ նա քաջասում է այդ արժա-
նապատիւթյունը, նրա անփականություն-
ը պահպանելու համար յես պատրաստ եմ
հոգիս կորցնել...

Նա հիմար տղա չէր և իրեն խորը
վիրավորված էր զգում. յես— նույնպէս :
Հետեյալ ուր յես և ընկերս այդ տիկնոջ
մասին արդեն թարձրաձայն խոսում էյինք,
առանց քաշվելու կոռտոյից, վորը միայն
մռնչում և խորհուրդ էր տալիս մեզ :

— Զգույշ, վորդիքս, մի մոռանաք, վոր
դուք զինվորներ էք և զոյություն ունի
կարգապահություն :

Վո՛չ, մենք այդ չեյինք մոռացել : Բայց
ճիշտն ապա՞ծ, մեզնից շատ շատերը, հա-
մարյա բոլորս խուլ ու կույր էյինք դար-
ձել, իսկ մեր այդ խլությունից ու կուրու-

Թյուռնից մեծ վարպետութեամբ ուղարկում
էին կտրիճ գլուղացիները: Նրանք հաղ-
թեցին: Նրանք շատ լավ էին վերաբեր-
վում զեպի մեզ և այն շիկահեր տիկինը
կարող էր շատ բան սովորել նրանցից. ո-
րինակ— նրանք շատ լավ կհասկացնէին
նրան, թէ ինչպէս պետք է գնահատել աղ-
նիւ վարդկանց: Յերբ մենք հեռանում է-
ինք աջնտեղից, ուր յեկել էինք արյուն
թափելու դիտարկութեամբ, մեզանից
շատերը ծաղիկներ ստացան: Գլուղի փո-
ղոցներից անցնելիս մեզ վրա նետում էին
վոչ թէ քարեր ու աղյուսներ, այլ... ծա-
ղիկներ, իմ բարեկամ: Յեւ կարծում եմ,
վոր մենք դրան արժանի էինք: Վատ
հանդիպումը կարելի չէ մոռանալ լավ հր-
աժեշտից հետո:

Նա ծիծաղեց, հետո ասաց.

— Ա՛յ, այս պատմածս դու պետք է բա-
նաստեղծութեան վերածես, վինչենցո...

Ներկարարը մտադրաւ, ժպտալով պա-
տասխանեց.

— Այո՛, դա շատ հարմար նյութ է մի
պոեմայի համար: Յեւ կարծում եմ, վոր

կկարողանամ այդ անել : Քսան և հինգ տա-
րին լրանալուց հետո , մարդ վատ քնարեր-
գու յե դառնում :

Նա մի կողմ նետեց արդեն տրորված
ծաղիկը , նորը պոկեց և յետ նայելով ,
հանդարտ շարունակեց .

— Մոր կրծքից մինչև սիրեցյալի գիրկը
տառնող ճանապարհն անցնելուց հետո ,
մարդ պետք է ձգտի ամենի հեռու... տե-
պի ուրիշ յերջանկություն... .

Իփականագործը լուել եր ուրբեղով գի-
նին բաժակի մեջ : Խաղողենիների այն
կողմը , ներքևում մեղմ աղմկում եր ծո-
վը . ծաղիկների բուրմունքը յողում եր
տաքացած տղում :

— Արևն է , վոր մեզ դարձնում է աշա-
պես ծույլ ու այնքան թույլ , — փնթփնթաց
փականագործը :

— Այլևս ինձ դժվար է հաջողվում քը-
նարերգական բանաստեղծությունը . յետ
չատ դժգոհ եմ ինձանից — ասում եր Վին-
չենցոն շարժելով նուրբ հոնքերը :

— Դու վորևէ բան արի՞ր :

Ներկարարը միանգամից չափառախա-
նեց .

— Այո, յերեկ յերեկոյան, «Կոմո» հյու-
րանոցի կտուրի վրա: Ու Խնամ է կար-
դալ կիսաձայն, մտադրադ, կարծես յեր-
գելով:

Արեւը աչնան յուր հողեվարքի

մեղմիկ շողերով

Ամայի ափի վաղեմի, մամռոտ

ժայռերին ընկալ

Յեւ տես, թե ինչպես ալիքներն անկուշտ

Կուլ տվին նրան դեպի սառ ծոցը

կապուտակ ծովի

Դեղնած տերեւներ ծառ ու տունկերի

Վորպես անկենդան յեփներանգ հավքեր

Շողին են տալիս գոռ փրփուրի մեջ.

Իսկ գունատ յերկինքը տխուր է, ցասկոտ

ծովն է մռայլած,

Արեւը միայն թեքվելով դեպ մուտք՝

Կը ժպտա անչար:

Յերկուսն ել յերկար ժամանակ լուռ է-
լին. ներկարարը գլուխը կախ գցած, նա-
յում է գետնին, իսկ մեծ, ծանր փափկանա-
գործը ժպտում է և վերջապես ասում է՝

— Ամեն բանի մասին կարելի չէ պատ-
մել գեղեցիկ կերպով, բայց ամենից լավ
է խոսել լավ մարդու մասին, յերգել լավ
մարդկանց:

Հ Ո Դ Վ. Ա Ծ Ն Ե Ր

I. Ս. Շահումյան — Մ. Գորկու մասին

II. Ա. Մռավյան — Գորկու հեփաթները

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

...the ... of ...
...the ... of ...
...the ... of ...

I. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսիմ Գորկին ուսումնականության ժամանակներից ելին է։ Յեւ ղա միանգամայն հասկանալի չէ։ Դուրս գալով ժողովրդական «ստորին» խավից, ինքնուսուցող, նա իր մեջ պարզապէս խոշոր գեղարվեստական տաղանդ։ Այս հասկանալով գրական փառքի բարձրունքներին, դառնալով պաշտոնական ընթերցող հասարակութիւն կողքը՝ նա յեկավ իր բնական պարզամտ ընթացքով՝ բանական մտ, վորոնց նա բերեց իր գեղարվեստական տաղանդը, կանգնեց նրանց հետ մի գրողակի տակ, դարձավ նրանց յերգիչն ու կենցաղագիրը։

Մաքսիմ Գորկին յերբեք չի գտնվել կյանքի արդի տերերի բանակում, յերբեք չի յեղել «հրճվողների, պարապ զրուցողների շարքերում»։ Բայց մինչև 1905—1906 թվականները, իր դեռևս չձևավորված,

վարդապետացն, բամկավար— ըմբոստ տրամադրությամբ, յուր «քանաստեղծական հողմազդարարի» հատկությամբ, նա կարող եր լինել սիրելի մեղանում «հասարակական կարծիք» ստեղծող պաշտոնական (այսինքն բուրժուական) ինտելիգենտական հասարակութեան կողմից: Բայց յերբ Գորկին ներկիւնց վառ կարմիր գույնով, և յերես դարձրեց բուրժուական հասարակությունից՝ դրանց թվում նաև իր արհեստակից գրողներից, վորոնք այդ ժամանակամիջոցին կորցրել էին ամեն մի հակում դեպի վարդապետացն անգամ, այն ժամանակ Գորկին իսկույն նրանց աչքում դրկիւնց իր հմայքից: Յերեկվա յերկրպագուներէ աերը փոխարինիւնց առնչությամբ, դժգոհությամբ, անգամ խտելությամբ դեպի նա: Ներկայումս դուք չեք գտնի վոչ մի աշխատեալ կոչված «առաջադիմական» թերթ, մայրաքաղաքի կամ գաղափարական, վոր ժամանակ առ ժամանակ, այս կամ այն ձևով, գիտակցաբար թե անգիտակցորեն, վրիժառու չլիներ Գորկուց, նրա համար, վոր նա յերես

դարձրեց. «Հասարակությունից» և գը-
նաց բանվորներին մոտ: Յեւ առհասարակ
միջոցների մեջ խտրություն չդնող բուր-
ժուակիան մամուլը, այդ դեպքում կանգ
չի առնում հաճախ ամենաանթույլատրելի
ձևերի առաջ, վորպէսզի վրեժխնդիր լինի
իր յերեկվա սիրելույ:

Այդպիսի «ձևերի» նմուշները մենք տես-
նում ենք ի միջի այլոց նաև մեզանում՝
Բագվում և դրանցից մեկի վրա, Գորկու
վերջին գրվածքների առթիվ՝ մենք կուզե-
նայինք դարձնել ընթերցողի ուշադրու-
թյունը:

Ընթերցողը յերևի չի մոռացել «Բագու»
թերթի քննադատ Ա. Այվազովի հերոս-
տրադիան վոտնձգությունը, նա ճան-
կարծ, իր համար իսկ անսպասելիորեն
վառվեց այնպիսի քնքշությամբ դեպի
«պրիմիտիվների» յերգիչը, այնքան ուժեղ
«ափսոսեց» «խեղճ Գորկուն» վոր անգամ
«Բագու»-ի խմբագրությունը դրանից ի-
րեն անհարմար զգաց: Նրան հետևեց

վերջերս այդ թերթի մի այլ աշխատակի-
ցը՝ Գր. Ստարցևը:

Նրա անցյալ թերթումը Գորկու վերջին
յերկու պատմվածքների («Տրտուռներ» և
«Մորդովկա») մասին, իրենից ներկայաց-
նում է այնպիսի մի նմուշ բուրժուական
ինտելիգենտական «ճշմարտության»՝ Գոր-
կու մասին, վոր մենք նրան յեռանդուն
կերպով հանձնարարում ենք մեր ընթեր-
ցողի ուշադրությանը: Տվյալ դեպքում
հարցը միայն նրանում չէ, թե դուր է
գալիս ընդհանրապես Գորկին Ստարցևին,
թե վոչ, թաղում է նա նրան, թե խղճում
է բարի պաշտոնակցի նման: Այդ բոլորը,
գուցե վերջիվերջո ճաշակի խնդիր է:
Մարդուն դուր չի գալիս Գորկին և նա
այդ արտահայտում է. ուզում է նա թա-
ղել Գորկուն և թաղում է: Ի՞նչ կարելի չէ
այստեղ նրա դեմ առարկել: Բայց հարգե-
լի Ֆելետոնիստը տվյալ դեպքում չի բա-
վականանում դրանով, նա իր ջանքերի
մեջ հասնում է մինչև քրեականության՝
դարձանալի՝ անդամ այնպիսի՝ «հրապա-
րականությունների» համար, ինչպիսին է

Ստարցեն ու այնպիսի թերթի համար՝
ինչպիսին և «Բագուկ» :

Ինքներդ դատեցեք :

«Տրտուկներ» պատմվածքի մեջ, ի միջի
այլոց, վերնադրի տակ, փակագծերի մեջ
գրված և ամբայի հիշողությունները : Ճա-
պոնական պատերազմին մասնակցած սպանե-
պատմում և պատերազմում զինվորներից
ստացած իր տարավորությունների մասին :
Նա «գանգատվում» և նրանց՝ այդ զինվոր-
ների զգեստ հագած թանվորներից ու
դյուղացիներից, վորոնք պիտի իբր թե
վերանորոգեն Ռուսաստանը : Նա ասում և,
վոր չի հավատում նրանց գործունեյու-
թյանը : Ռուս մարդը, նրա ասելով,
«պատահիլ և իր եյությամբ» և ընդունակ չե-
փոչ մի նոր բանի : «Ռուսը չի կարող լի-
նել սոցիալիստ, նրան դրա համար մի ինչ
վոր բան և պակասում» : «Յեւ չեմ հավա-
տում սոցիալիզմին» — ասում և գանգատ-
վող սպան. — «Նրան հնարել են հրեանե-
րը : Դա ուղղակի ի տիյուս աշխարհի ցըր-
ված մի ժողովրդի միանալու փորձն և :
Սոցիալիզմ, սիոնիզմ, դրանք յերևի նրա

Համար միևնույնն է...» : Ապա ապան իր
գանգատներէ մեջ, հարձակվում է ոռւս
պատանեկության ղեկավարներէ վրա (ըն-
թերցողն յերևի հասկանում է, թէ ինչ ղե-
կավարներէ մասին է խոսքը) մեղադրում
է նրանց բոլոր մահացու մեղքերի մեջ,
անվանում է նրանց «խաբեքաներ», «դա-
վաճաններ», համարյա թէ մարդասպան-
ներ՝ ոռւս պատանեկության նկատմամբ :
Յեւ մահա հանդես է դալիս Ստարցևը, վո-
րը Գորկուն հոմանիշ է դարձնում սպա-
յին, համոզում է ընթերցողին, վոր սպա-
յի բերանով խոսում է. ինքը Գորկին...
Յեւ... Ո՛վ ճակատագրի ծաղր, Ստարցևը
դրահամբուրում է պաշտպանելու համար սո-
ցիալիզմը, պաշտպանելու համար ոռւս
գյուղացուն և բանվորին Գորկու հարձա-
կումներէ ու զրպարտություններէ : Կա-
րող էք յերևակայել, ընթերցող, այդ
պատկերը...

Գորկու մյուս պատմվածքը «Մորդով-
կա»-ն է : Ստարցևը մեղ պատմում է, վոր
իբր թէ Գորկին այդ պատմվածքի մեջ
դուրս է բերել կոմսակցական աշխատան-

քին նվիրված սոցիալիստ բանվորի մի-
տիւ, նա կին ունի, վորը դժգոհ է
դրանից և պահանջում է, վոր նա ձեռք
քաշի կուսակցությունից և հոգ տանի բա-
ցառապես իր ընտանիքի մասին: Նրա մեջ
սրատմում է Ստալինը՝ տեղի է ունենում
պայքար՝ մի կողմից ընկերները, գաղա-
փարները, մյուս կողմից՝ գեղեցիկ կինը:
Սերը դեպի կինը, դեպի նրա գեղեցիկ
մարմինը հաղթանակում է և բանվորը
թքում է կուսակցության վրա, իր իդեալ-
ների վրա և հրաժարվում նրանից: Յեւ
Ստալինը, նկարագրելով այդ քուրը,
դրա մեջ ել նկատում է Գորկու հուսա-
խաբություններն ու գանգատները, գըտ-
նում է, վոր Գորկին զրպարտում է բան-
վորներին: Նա քիչ է մնում Գորկուն և
հարյուրաւորապէս հայտարարի, այո նա նր-
կարագրում է նրան այդպէս, նա համե-
մատում է նրան դրանց հետ: Ու դարձ-
յալ՝ բանվորներին Գորկու «զրպարտու-
թյուններից» ու «տրտուկներին» պաշտ-
պանողի ազնիւ դերը:

Բայց բաց արեք ընթերցող «Современный

м и р »-ի (այս տարվա) առաջին համա-
 թիւ և Լաւրդաօցեք այդ լավ պատմութեանը :
 Տեսեք, թե ի՞նչ հեքիաթներ ե պատմում
 ձեզ Ստարցեր: Ճիշտ ե, վոր Գորկու
 պատմութեան մեջ Վլան Բանվոր Պավել Մա-
 կովը և նրա կինը՝ Դաշան: Ճիշտ ե, նա
 անձնուրաց և իշխանական աշխատող ե,
 իսկ Վլինը և նրա հայրը՝ Վալէկը՝ դժգոհ
 են նրանից և հաճախ հանդիմանում են
 նրան այն պատճառով, վոր նա ընտանիքի
 (կնոջ և յերեխայի) շահերը դոհարեցրում
 ե այն մեծ գործին, վորին նա ծառայում
 ե: Բայց միայն այդքա՛նը: Գորկին նկա-
 րագրում ե և նկարագրում ե ճշգրիտ ու
 շնորհալի՝ առաջավոր բանվորների Վլան-
 քում առվորական յերկապառակություններն
 ընտանիքի հետ և այն հողեկան դրաման,
 վոր նրանք վերապրում են: Այստեղ վան
 այդ դրամայի բոլոր փոխանցումները,
 բայց վո՛չ մի խոսք, վոչ մի ակնարկ այն
 մասին, վոր Պավելն իբր թե պարտա-
 դուրս յեկավ, վոր նա փոխեց իր գաղա-
 փարները կնոջ գեղեցիկ մարմնի հետ:
 Պավել Մակովը պատմութեան մինչև վեր-

ջը մնում է նույնը, ինչպես եր նա ըս-
կըղքում:

Պատմվածքի սկզբից մինչև վերջը, վոչ
Պավելի, վոչ ել հեղինակի գլխում հարց
անդամ չի ծագում այն մասին, վոր իբր
թե պետք է ընտրել առհասարակ յերկու-
սից մեկը— ընտանիքը, կամ բանվորական
գործը: Այդ հարցը պատմվածքում բնավ
չի դրված: Իսկ դուք հիմա լսեցեք պ.
Ստարցևին: Նրա խոսքերով միայն Պավե-
լի մասին չե, վոր գանդատվում է Գոր-
կին: Նա մենակ չե, Գորկին գանդատվում
է,— հավատացնում է Ստարցևը,— վոր
կանայք ու ընտանիքը փչացնում են թո-
ւոր «գիտակից» բանվորներին, փետում են
նրանց թևերը և դարձնում վողորմելի,
անդույն ու անկամ մարդիկ: Ստարցևը
հավատացնում է, վոր Գորկու աչքում
նախկին «հողմադարձներ» բոլորը
դարձել են «թրջված հավեր»:

Յեւ հասկանալի չե, վոր Ստարցևը նո-
րից «ստիպված է» պաշտպանելու բան-
վորներին Գորկու «գրախոսութուննե-
րից...

Ինչո՞ւ համար ե հնարել այդ բոլորը
Ստարցեր: Արել ե նա զխտակցորեն, թե
նրան վորեւե) մեկը ծառայություն ե մա-
տուցել՝ սխալ հաղորդելով պատմվածք-
ների բովանդակությունն ու նա յել, ան-
ձամբ չկարդալով, շտապ կերպով, հավա-
տալով ուրիշներին, «թխել ե» իր ամենո-
րյա պարտադիր հողվածը. կամ թե նա
կարդացել ե պատմվածքները, բայց նրա
մեջ տեղի չե ունեցել վորոշ հոգեբանական
բեկում ե նա այդտեղ տեսել ե այն, ինչ
նրան պետք եր նրա համար, վորպեսզի
դրի հենց այդպիսի «անհրաժեշտ» հող-
ված, — դա իհարկե, դժվար ե պարզել:

Բայց դա մեզ համար կարևոր ել չե:
Կարևորն այն ե, վոր բոլոր նման «քննա-
դատները» խոսելով բանվորական գրող
Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ
այն բոլորի մասին, ինչ վերաբերվում ե
բանվորներին, վոր մի կերպ չեն կարո-
ղանում խուսափել զխտակցորեն թե անգի-
տակցորեն՝ ստից, խեղաթյուրումներից,
զրպարտություններից:

Գորկին— տրտնջող, հոսանահատված և
 լացակամած: Գորկին— բանվորներին, սո-
 ցիալիզմը դրպարտող, Գորկին— համար-
 յա թե առհարյուրակային: Վորպիսի ապ-
 տակ և Ստարցևի և իր նմանների համար
 Գորկու վերջին հոգվածը «Ինքնու գը-
 րողների մասին» տպված «Современный
 мир»-ի փետրվարի համարում: Հայտ-
 -նոց դժիմաճ մզմ միջիտ դոժմաի մաի՝ Գ մո
 հաճելի դառնում տիրող տարրերի համար,
 բուրժուական ինտելիգենցիայի համար,
 այնքան ավելի մոտ ու գնահատելի յեր
 դառնում բանվորների համար, պրոլետա-
 րական— ինտելիգենցիայի համար, «դե-
 մոս»-ի համար առհասարակ: Հազարա-
 վոր թեւեր ձգվում ենին գիտակից կյանքի
 համար արթնացող, «Ժողովրդի ծոցից յե-
 լած» գրականությամբ (հետաքրքրվող
 մարդկանց արտերից դեպի իրենց պանծա-
 լի յեղբայրակիցը— ինքնու գրող Մաք-
 սիմ Գորկին: Ով կարիք եր գգում արտա-
 հայտելու իր զգացմունքներն ու խոհերը
 մոտիկ մարդու առաջ, ում մեջ ցանկու-
 թյուն եր հղանում գրել վորևե բան, փոր-
 ձել իր բախտը գրականության մեջ, նը-

րան եր ուղարկում ձեռագրերը, նամակ-
 ները, վոտանավորները: Գորկու թղթա-
 կիցների մեջ գուշ կհանդիպեք լատիներ-
 րի, գյուղացիների, կոչկակարների, գըռ-
 նապահների, խոհարարուհիների, սպասու-
 հիների, պոռնիկների, խնձորավաճառի,
 լվացարուհու, գերեզմանապահի, զինվորի,
 աքսորականի, տաժանակիրների և այլն և
 այլն: Յեւ նրանց բոլոր գրվածքները, ինչ-
 պես յերևում է հողվածից խնամքով և
 դարձանալի սիրով ու ուշադրությամբ
 կարդվում է՝ ուսումնասիրվում է Գորկու
 կողմից: Նա գրադրություն ունի նրանցից
 շատերի հետ, խորհուրդներ և տալիս, թե
 ով ինչպիսի գրքեր պետք է կարդա, ի՞նչ-
 պես գրել, ի՞նչ գրել: Յուրաքանչյուր տո-
 դամիցին նկատելի յե հեղինակի դարձանալի
 նուրբ, ազնիվ հոգին, լցված անսահման սի-
 րով դեպի «սարսափելի կյանքի մարդկանց»
 ինչպես ինքը արտահայտում է նրանց մա-
 սին:

Ռուս գրականության մեջ, գոնե առդի-
 իրավանության՝ մենք չգիտենք մի այլ
 գրողի այդ անտիճանի լարոյապետ, ներ-

քաղաքացի ու մաքուր, ինչպիսին Գորկին է։
Հարկավ, մենք այդ ասում ենք միայն
վերոհիշյալ հոգևածի հիման վրա, այլ նա-
կատի ունենալով նրա բոլոր գրվածները,
նրա ամբողջ գրական գործունեությունը.

«1906-ից մինչև 1910 թիվը — գրում է
Գորկին, — յես կարդացել եմ ամբիջի քան
400 ձեռագիր — նրանց հեղինակները «ժո-
ղովրդական գրողներ» են ճշող մեծա-
մասնությունամբ, այդ ձեռագրերը գրված
են իրատարազեա, նրանք յերբեք տպված
չեն լինի — բայց նրանց մեջ արտացոլում
են մարդկային կենդանի հոգիներ, նրանց
մեջ հնչում են մասսաների անմիջական
ձայնը, նրանք հնարավորություն են տա-
լիս իմանալու, թե ինչի մասին է մտածում
անհանդարտացած ռուս մարդը վեց ամսյա
ձմեռվա յերկար գիշերներին»... Յեվ,
վերապա թափանի ընթերցողի հետ իր
տպավորություններն այդ ձեռագրերից՝
Գորկին բաժանում է նրանց խմբակների,
բերում է մեծ քաղվածքներ իր ինքնու-
գրողների պատմվածքներից, նամակներից,
քանաստեղծություններից։ Նա փորձում է

պարզել, թե ինչն է ստիպում գրել, ինչի մասին են նրանք գրում, ինչպես են վերաբերվում կյանքին և գրականությանը: Նա համեմատում է պաշտոնական գրականությունը, սովորած գրականությունը — «ինքնուսների» գրվածքների հետ, նոր «ժողովրդական ստորին խավերից» յեկող գրականության հետ... «Առաջինում — ասում է Գորկին, — մենք տեսնում ենք հոսսալքում, ճանաչված գրականագետների ջղախին, քմահաճ վրանձգություններ, վորոնք ինչպես իրենք են հայտարարում — հոգնել են ժամանակակից լարվածությունից ու քարդությունից». յերկրորդում — «պարզ ու անկեղծ» մարդկանց, «սարսափելի կյանքի» մարդկանց, սոված մարդկանց գրականության մեջ՝ մարդկանց, վոր հաճախ գրում են քանտերից, աքսորավայրից, տաժանակիր աշխատանքի վայրերից — այստեղ տրամադրությունը «բարձր է, գործունակ, հաճախ վոգեչունչ»:

Գորկու հեղինակներից մեկը գրում է. «Զգում եմ, բարձրանում է իմ մեջ մի ահուելի ուժ — ասաց Իլիա Մուրոմեցը ծե-

լուսկներին, յերբ խմեց մաճառի հակա մի
թասը. այդ նույնը յես կարող եյի ասել
իմ մասին հողեկան տեսակետից: Արտա-
քուստ դա անասելի ծիծաղելի կլիներ.
յես շատ փոքր եմ, խեղճ ու կրակ և որըս-
տորե թուլանում եմ զանազան ապրումնե-
րից ու կարիքների պատճառով: Անախորժ
ե այդ ինձ համար, յես կուգեմայի մի
վորևէ բացառիկ լավ, սիրուն բան անել
այս աշխարհում»... Մեկ ուրիշը «Աշնան
որեր» վոտանավորի բանվոր հեղինակը,
բացականչում է. «ո՞վ գիտե, գուցե յես
խելագարվում եմ: ուրախությունից, վոր
ապրում եմ լույս աշխարհում»: Գորկին
հիշված վոտանավորից մի հատված է մե՞
բերում.

«Վասիայի անկյունը մութ է ու խոնավ,
կյանքը լի վշտով, հոգսերով.
Բայց... ուրախ է Վասյա Դյոմինը,
Գիտե Վասյան, կյանքն ել լուսառատ:

Վասյան ամուր մարդ է
Թեպետ անիծյալ մրսելուց՝
Նրա տաքությունն է
Յերեսուն ութ ու յերեք տասներորդական:

Բայց մեր Վառյան չի տնքում,
Թեաթափ չի լինում
Ձե վոր ցավն հոգուն չի գիպում
Մնացածը՝ դատարկ բան է՝

Մի ուրիշ բանաստեղծ, 23 տարեկան
դյուղապի, տղում է—

Ճեժբախտ կյանքի, խաղար ու վորր կյանքի
մարդիկ,
Ձեց յեղբայրորեն ուղարկում եմ իմ յերզս
զվարթ:
Յես յերզում եմ խառն ու ծաղկունք, խինդը
կանանց ու կույսերի:
Կյանքի խինդը, մանկությունը, մեր հայրենիքն
եմ յես յերզում:
Վշտի մասին չառ են յերգել, վշտից, ցավից
կշտացել ենք:
Հոգսից, ցավից վողջ աշխարհն է հոգնել արդեն:
Հոգնել ենք վեճերից, մեր շարությանից, սիրտս
ուզում է խնդում,
Ձեռքերս մեկնում եմ դեպի դործ—նոր բազդ
կսկւռն:

Կան շատ հետաքրքիր արձակ հասոված-
ներ միեւնույն զվարթ, կենսասուրբախ, մար-
տախտան արամադրությամբ լի: Առանձնա-
պես հիշատակելի յե վատ, դունեղ մի հատ-

ված, վաղեջուհն է մի հիմն նվիրված բնու-
թյանն ու կյանքին, բանավորի գրած «Յե-
րախատապարտ եմ, բնության» բնորոշ վեր-
նադրի տակ:

«Լնթերցողը կարող է կարծել — առում է
Գորկին — թե դա բանասիրտի՞նչ ու այդ
որատնտանով էլ այդքան բարձր է հնչում»:

Բայց դա աներասխանի կյանք, նախ և
առաջ, առարկում է նա «Ծաղիկներ հա-
վաքելու համար, չե՞՞ վեր նրանք պետք է
մի տեղ բուսնեն»։ Հետո Գորկին համե-
մատում է յուր նյութերն ինքնուր բա-
նաստեղծների վերջին սարկներին լույս
տեսած մի քանի ժողովածուների հետ:
Նրանց բոլորի մեջ էլ հնչում են միեւնույն
զվարթ հանգերը:

Հետաքրքրության համար առաջ ենք բե-
րում մի քանի նմուշներ: Մեկը գրում է —

«Այո՛, բնիկ, ժամը չե՛ վաղրալու:

Մեր աշխարհում տեղը չե՛ վշտի:

Ա՛յլ յերգեր են պետք յերգելու —

Վերանց մեջ բողոքը մեր լովի»:

— Մյուսը կալուպայի գյուղացի Սա-
վինը՝

«Կյանքը—կռիվ է՝,
Ուր յես մարտնչում եմ.
Թող բաղդը հարվածի—
Յես չեմ ընկճվի»:

— Ահա և գյուղացի Շկուլյովը.

«Միայն աշխատանքով
Մենք բոլորս ենք ապրում.
Աշխատանքն է մեր հայրը
Բախտի դարբինը:

Նրա շնորհիվ կթոթափենք
Շղթաներն ու լուծը.
Համարձակ առաջ»:

Ապա Գորկին առաջ է բերում այդպիսի
խնդրում բանաստեղծներից մեկի սարսա-
փելի խնդհակենսագրությունը ու մի շարք
բանաստեղծությունները, վորոնք, այնու-
ամենայնիվ, լի յեն միևնույն խրոխտ, կեն-
սուրսիս զգացմունքով: Առաջ ենք բերում
դրանցից մեկը.

«ՏԱՌԻՆ»

Տառը-Վտառին, խոսքը-խոսքին,
Սեղմ տողեր են ծառանում
Դեպի վառ կյանք, դեպի նոր կյանք
Սնվախ նրանք Էանչում են,

Ժամը-ձամին, սրը-որին,
Հավետն են ընկնում տարիները,
Կյանքը ծաղկում է, վառվում կրակով
Ամենակարող աշխատանքի:

Միտքն ու ձեռքը դանդաղորեն
Հաղթահարված խավարի մեջ
Գեպի ճմարտության թաղավորությունը
Հավիտենական ուղին են հարթում

յերկրում:

Այդքան կորովալից ու ինքնավստահ է
հնչում «մասսաների անմիջական ձայնը»,
«սպարդ ու անկեղծ մարդկանց ձայնը»...
Այդ հանգամանքը անմիջական ապացույց
է ծառայում տողերիս գրողի համար միշտ
այն անվիճելի փաստին, վոր մեզանում,
Ռուսաստանում, այսպես կոչված «մաս-
սաների ռեակցիա», ռեակցիան ցածից— գո-
յություն չունի: Մեր ռեակցիան գլխավո-
րապես կառավարական է, արտաքին,
նյութական, վորը ճիշտ է, գրավել է
թուրթուական, առավելապես բուրժուա-
կան— ինտելիգենտական խավերը, բայց
միայն մի ծայրով է կաշռում լայն ժողո-
վրդական մասսաներին: Միայն կարճա-

տես, արտառոց դիտողութեան դեպքում և
 միայն անձնական հոլափորձութեան և
 ջղախոլութեան ակնոցներէ միջով նայող
 մարդուն, տեսարանութեան մեջ անհաս-
 տատ մարդուն կարող և թիւալ, թե պրոլե-
 տարական կոտորակերպութեաններէ, միու-
 թեաններէ, ակումբներէ կործանակելը,
 ներկայումս դոյութեան ունեցող նրանց
 փլատակներէ մեջ՝ կենդանի աշխատանքի
 բացակայութեանը՝ հետեանք են բանվոր-
 ներէ հողնածութեան ու հոլափորձութեան,
 նրանց հին դադարեալներէ թափանկելուն,
 հետեանք ներքին ուսուցիչի: Հարկաւ,
 Գարեջի յե ցանկաւաւ մեր բանվորներին
 ավելի դիտակցութեան, ավելի ծանոթու-
 թեան իրենց յեղրոտական յեղրայրակից-
 ներէ փորձի հաստ, ավելի յեռանդ վերելից
 յեղր վայրի ուսուցիչի կողմից մեկը
 մյուսի հետեից խլիճ իրենց դիրքերի
 արշաւանութեան դործի մեջ. բայց անի-
 բանալի ու անիմաստ կլինէր ասել, թե
 նրանք իրենց դիրքերը դիջում են միամո-
 վին, շնորհիւ ներքին ուսուցիչի: Կըրկ-
 նում ենք. Գորկիու չորս հարյուր թղթա-

կիցները միայն հաստատում են այդ ան-
վիճելի փաստը :

Ընթերցողն իհարկե, արդեն ներատեղ թե
վորքան բացասաբար և վերաբերվում Գոր-
կին մեր պաշտոնական գրականագետների
«քմահաճ ու ջղախին վստեճգություննե-
րին» և մյուս լկողմից, վորպիսի ուրախու-
թյամբ և նա արձանագրում մասսաների
ստորին խավերի գլխարթ, կենսունակ տը-
րամագրությունը : Վորպեսզի այդ առթիվ
վոչ մի կատակածի տեղ չմնա, մենք չնայե-
լով նրա մեծ ծախսին, առաջ ենք քերում
Գորկու հողվածից մի ծայր աստիճանի
փառ հասկածը :

«... Յերբ կարդում ես կուլտուրական
թխարդու խղճուկ աշխատությունը, վորը
տխուր, տղեղ, հաճախ իսկ բորոտի վրի-
ժառու անկեղծությամբ մերկացնում և իր
թարախակալող վերքերը... տարածում են
դրում մի յերկրի համար, ուր ինտելի-
գենցիան համարյա ամեն մի տասնամյա-
կից հետո գլխով սուղվում և ֆատալիզմի
հաճիճը և հանդում և ինքնադատավեա-
ման ու ինքնաթքման, ախար կերպով կոչե-

լով այդ տղերդ գրադմուքը — ինքնակատա-
րելագործում» :

«Անկեղծ եմ առում — յես մոչ մի
չեմ ուղում միջապահել : Յեմ ինչու հա-
մար : Ոչուսակա՞ն ինտիլիգենտն (ինքն ի-
րեն) մառնալոր հիկարում միջապահում : Ե-
նա այդ անում եմ իշտ մի այնպիսի հի-
վանդանին յեռանդով ու լիքով, կար-
ծես թե Պ. Մ. Դաստոյեյևսկուն քննու-
թյուն ե տալիս ինքնավերելու գիտու-
թյունից» :

«Բայց ուղում եմ առել. տարոնայք .
յեթե ձեր ախրալ խառնում ե, այդ պրո-
ցեսի ընթացքում, փողոց միք միտղե .
փողոցով կենդանի, առողջ, նոր մարդիկ
ու յերեխաներ են ման գալիս, մանուկ-
ներ, վաղ նրանց մեռածակար ե տեսել :
Թե ինչպես եք դուք լուծաթարի լինում :

Մասաղ ու սիրելի մեր յերկրում մար-
դիկ ջահել են ու զգայուն ե իրենց ջահե-
լությամբ անսահման դյուրազգաց են . իսկ
ընկնալորությունն ու ամեն տեսակի ջը-
ղածդությունները — մարակիչ են ե դա-
պիտի հիշել ի հարգանք դեպի իյանքը ,

Հայրենիքն ու մարդը : Իսկ հարգելով ինքդ
քեզ — մի բղավիր, մի տնքաւ և յեթե հա-
սել և ժամը մեռնելու — մեռիր մենակու-
թյան մեջ. դա և՛ զեղեցիկ և և՛ առողջա-
պահական» :

«Ինձ, հույս ունեւ, շարունակուամ և Գոր-
կին, չեն մեղադրի աշտպիտի զեղատովո-
թյան համար և չեն համարի ինչպես մի
չար թոտնձղություն. յեւ խոտում եմ մե-
ծապես ցավելով նրանց համար, ով ցավ
և լըրում, խորը վշտով դեպի նրանց, ով
տանջւում և, բայց եւ ամէլի մեծ վախով
այն յերիտասարդների համար, վորոնք հո-
ղից բարձրանում են դեպի կուլտուրա,
բարձրանում են ուրախ, ատեղծագոր-
ծող աշխատանքի համար պարզած ձեռքե-
րով և վորոնց համար դուք պետք եք, վոր-
պես բարեկամներ, վորպես ուսուցիչներ
և վոր թե վորպես որինակներ ամեն տեսա-
կի հողեկան խեղաթյուրումներին» :

Այս վրաւորտ հասկածի մեջ և Գորկին —
ամբողջովին : Վորքան նման և նա, ճիշտ
չե՞, հուսահատած, բացակամած, տրտնջող,
բանվորներին զրպարտող, անցիտպիտը հը-

լեական գյուտ հայտարարող համարյա թե
սահարյուրակային այն Գորկուն — ինչպի-
սին պետք ձեր համարել նկարագրած բուր-
ժուական լրագիրը:

Վերջացնելով հոգւածը, մենք անհրա-
ժեշտ ենք համարում նշել մի հանդամանք
ևս, վոր չի կարելի լռությամբ անցնել,
խոսելով Գորկու մասին: Դա՝ մարքսիս-
տական քննադատության կողմից արդեն
նկատված Գորկու վոչ բավարար սկզբուն-
քային տոկունությունն է, նրա մեջ հետե-
վողական մարքսիստական պարզ մտածե-
լակերպի բացակայությունն է: Տվյալ
դեպքում դա արտահայտվում է Գորկու
կողմից ինտելիգենցիայի դերի ու նշանա-
կության սխալ, դուտ նարոդնիկական ըմ-
բռնողության մեջ: Դա նկատելի չէ և վե-
րել բերված հոգւածում, և Միխայիլովս-
կուց վերցրած քաղվածքից, վորի ոգնու-
թյամբ, ինչպես պատմում է Գորկին, նա-
իր նամակների մեջ պաշտպանում է ինտե-
լիգենցիան իր բանվոր թղթակիցների հար-

ճակումներին և մի շարք սխալ յեզրակա-
ցություններին, վոր անում ե Գորկին իր
հարուստ, այլ կողմերով լավ մշակված
նյութին: Մենք այստեղ մանրամասն կանդ-
չենք առնում Գորկու հողմածի այդ կող-
մի վրա: Կատենք միայն, վոր այդ սխալը
Գորկու կողմին, դժբախտաբար, պատա-
հական չե: Գորկու աշխարհայացողության
մեջ, մեր կարծիքով, կան բավականաչափ
նարողնիկական տարրեր: Կան բաներ, վո-
րոնք, ըստ յերևույթին նրան դժվար կլինի
յուրացնել և կան բաներ, վորոնց դժվար
կլինի նրան մոռանալ:

Զնայելով այդ բոլորին՝ Գորկին պրոլե-
տարական գրականության գարդն ու պար-
ծանքն է:

Յեվ վերլուծած Գորկու հողմածը ընդ-
հանրապես և նրա մյուս նոր գրվածքնե-
րը — վերը հիշված «Տրտուներ» և «Մոր-
դովկան» ինչպես նաև նրա արանջելի միոն-
յատուրները նեապոլի գործադուլավորնե-
րի մասին և Գենուեղի գործադուլավորնե-
րի յերեխաների հանդիպումը, — վորոնք
լույս են տեսել «Հեքիաթներ» վերտառու

Թյամբ՝ եւ ամէլի մոտեցրին Գորկուն բան-
վորներին :

Յեւ լանվորները հարատու թյամբ կարող
են ասել .

«Այո՛, Գորկին մերն է . նա մեր նշարիչն
է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխա-
տանքի ազատագրութեան վեհ պայքարի
մեջ» :

Բագու, 1 11 ք.

II. ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿԻ—ՇԵՔԻԱՅՆԵՐ

Հայտնի չէ, Վոր մի տասնամյակ առաջ, այն ուրերին, յերբ Ռուսաստանը խոշոր պատմական դեպքեր եր ապրում, հռչակավոր ռուս գրող Մաքսիմ Գորկին Վորոշակի հարեց բանվոր դասակարգի շարժման։ Ռուս բուրժուական մամուլը, Վոր մինչեւ այդ ուրը «ընդունում» եր Գորկուն և նրան համարում խոշոր, տաղանդավոր գրող — այժմ աղմուկ քարձրացրեց. մեծ ու պրաստիկ «քննադատներ» և հրապարակախոսներ չարախիսեղ ակնարկներ եյին անում Գորկու տաղանդի «չորացման», «այլասեուման» մասին և գովաչակում, Վոր «սոցիալ դեմոկրատական ծրագիրը» վերջնականապես կսպանե Գորկուն, իբրեւ գեղարվեստագետ գրողի։ Բանն այնտեղ հասավ, Վոր մինչև անգամ մի հայ «սոցիոլոգ» հրապարակախոս ել սկսեց «վողբալ» «Գորկու

տաղանդի «անկումը» : Այդ խմաստուն քըն-
նադատները դատում էին այն սխալ տե-
սակետից, վոր իբր թե պրոլետարական
շարժումը միայն և միայն տնտեսական —
քաղաքական շարժում է և վոր այդ շար-
ժումը վոչ մի առնչություն չունի գեղար-
վեստի հետ, վորովհետև գեղարվեստը
ապագասակարգային է :

Բուրժուական քննադատների մարդարե-
ությունները չիրականացան : Ակամա պան-
դուխտը, Գորկին քաշվեց իտալական Կաստ-
րի կղզին և սկսեց ստեղծագործել մի նոր,
չտեսնված թափով : Կարճ ժամանակամի-
ջոցում նա լույս ընծայեց մի շարք տա-
ղանդավոր գրվածքներ . «Исповедь», «Ле-
то», «Чужаки», «Городок Окуров»,
«Матвей Кожемякин», «Сказки», «Жа-
лобы», վերջերս էլ «Детство» և այլն : Այդ
յերկերը յեկան ապացուցելու, վոր պրո-
լետարական աշխարհայացքն ու աշխարհա-
գագումը Գորկու գեղարվեստական ըստեղ-
ծագործությանը հզոր թափ են տվել և
հարստացրել : Վոր բուրժուական քննա-
դատը այժմ կհանդգնի ասել, վոր նոր

Գորկու յերկերը թույլ են գեղարվեստա-
կանի կողմից, վոր նրա ստեղծած պատ-
կերները կեղծ են կամ մտածածին:

Մի ուրիշ անգամի թողնելով խոսելու
Գորկու նոր գրվածքների մասին, այս ան-
գամ կանգ եմ առնում նրա «Հեքիաթները»
վրա:

Կախարդական վոչինչ չկա հեքիաթների
մեջ. նրանք կյանքի ստեղծած հեքիաթ-
ներ են. բովանդակությունը՝ Խաչիսի
աշխատանքի մարդկանց առօրյան է, նը-
րանց մտքերն ու հույզերը, ուրախու-
թյուններն ու պատմությունները: «Հե-
քիաթները» վողողված են խոր, մարդկա-
յին անկեղծ սիրով ու մարգարեական հա-
վատով. դեպի մարդկության պայծառ ա-
պագան: Ամբողջ գրքից բուրում է մի զար-
մանալի ու վարակիչ լավատեսություն,
կենսաթրթիռ աշխարհադպացում:

Ովքե՞ր են Գորկու հերոսները — ժողո-
վուրդը, ժողովրդական մասսան — բան-
վորներ, բանվորուհիներ, ձկնորսներ,
գեղջուկներ, գեղջկուհիներ, յերեխաներ:
Գորկու նկարած գյուղերը ճիշտ է, տակա-

վին չեն աղառովել նախապաշարմունքներից և կաթոլիկ յեկեղեցու աղեցությունից, բայց և այնպես խորն և գլուղացիների կենսունակ բնադղը: Գյուղի վորդի բանվորները գործարանում սոցիալիստ են դառնում, նրանց հայրերը զգալով սոցիալիզմի ուժը և հմայքը— ուհնում են իրենց զավակների գործի արդարությունը— վորովհետև այդ «արդարությունից աշխատանքի քրտնքի հաս է բուրում»:

Քաղաքը... ահա մի մանուկ քայլում է դեպի քաղաք «քաղաքը տեքում է յերջանկության ձգտող իր քաղմերանդ ցանկությունների տաղնապի մեջ, նա յեռում է ապրելու կրքոտ կամքով...» Այդպես է Գորկու քաղաքը. ապրելու այդ հզոր կամքը բանվոր դասակարգի կամքն է, նրա աշխատանքը կյանքի համար:

Մի քանի հեքիաթ մատառյակիան տեսարանների հաջող պատկերներ են տալիս. նկարագրում արամվայի գործադուլի ժամանակ փողոցում խռնված ամբոխը ցույց է անում գործադուլավորներին պաշտպանելու, Գենուա քաղաքի կայարանի առաջ

խոնաված ամբոխը չտեսնված ցնծությամբ
դիմավորում է Պարմա քաղաքի դործա-
դուլավոր բանվորների սոված յերեխանե-
րին . . . «— Կեցցե՛ մանուկ Պարման, դռնից
ամբոխը ու շրջապատեց յերեխաներին . . .
յերեխաներին բաժանեցին իրենց մեջ և
յերդ ու ծիծաղով ցրվեցին— «փողոցներից,
ինչպես հակայական յերդահոններից— ու-
րախ հնչում էր դեպի նոր լեյսանքի հորիզոն-
ները քայլող մարդկանց ուրախ աղմուկը» :

Ուշադրություն բեռնող բանվորների
տիպեր վրան «Հեքիաթներում» :

Հոյակապ և Սիմպլոնի տոննելի փորե-
լուն մասնակցած բանվորը :— Նա հան-
դարտ վերադավ պատմում է իր հոր մախ-
հանք տոնները փորելու ժամանակ, որապ-
մում է և և այն, ինչպես տոնները յերկու
կողմից փորող բանվորները մոտենում են
մեկ-մեկու ու իրանց բաժանող վերջին
քարը փշրում ու այնտեղ, խոր ու մութ
տոննելում իրար անձանոթ բանվորները
դրկախառնվում են հպարտ իրենց կատա-
րած մեծ դործի դիտակցությամբ :

Ուժեղ ու աղղեցիկ տիպ է ներկայաց-
րանվոր— խմբադրի տիպը, վոր Իբսենի
Բրանցի հետևողականությամբ կռւում է
իր սիրած աղջկա նախապաշարութեան
դէմ:

Գեղեցիկ հեքիաթներ կան նվիրված յե-
րեխաներին: Յերեխաները Գորկու սիրելի
հերոսներն են— «յերեխաները կյանքի ծա-
ղիկներն են», «նրանց ծիծաղը աշխարհի
ամենաաղղեցիկ յերածշտությունն է»:
Մանուկ Պեպելի տիպը շատ հաջող է և
խոր տպավորություն է թողնում:

Բայց Գորկին ունի և մի ուրիշ սեր—
սեր դեպի մայրերը:

Ահա դորտաղտութ մի մայր, վոր ան-
տրտունջ խնամում է իր աշխարհակ յերե-
խային: Ահա մի ուրիշ մայր, վոր հայրե-
նիքին դատաճանաճ վորդու սիրտը սուր է
մխում:

Կաթոլիկ յեկեղեցու ուժեղ բաղուկների
ճղմած լրանվորութուն տիպը ամենահաջող
տիպը պիտի համարել «Հեքիաթներ» կին
տիպերի մեջ: (Այս հեքիաթը տպագրվեց

«Պայքարի» այս տարվա Նո. Ն. 3 և
5-ում) :

Գորկու աչքից չեն վրիպել կյանքի ըստ-
վերային կողմերը. հերոսները զգում են
իրենց մեծ գործի զբալարով թյու՛նի— բայց
ուժեղ են անց կամքը և առանց վարանե-
լու շարունակում են իրենց ծանր պայքա-
րը :

«Հեքիաթները» լույս տեսնելուց հետո
այլևս մոչ միք իրավունք չունի ասելու,
մոք բանվորական կյանքը չի կարող գե-
ղարվեստագետի մոգվորել :

«Հեքիաթներից» մի քանիսը թարգման-
ված են հայերեն : Հ. Հակոբյանի թարգ-
մանած յերկու հեքիաթը լույս են տեսել
առանձին հրատարակությամբ «Յերկու
պատմվածք» վերնագրով :

1916 թ.



Handwritten text, mostly illegible due to fading. The text appears to be organized into several paragraphs, with some lines starting with capital letters. The ink is very light and the paper is aged.



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I

1. Մաքսիմ Գորկու «Մի անգամ աշխարհ...» պատմվածքն առաջին անգամ տպագրվել է «Самарская Газета» թերթում, 1895 թ. հունիսի 20—22 (№№ 154—156)։ 1892 թվին այդ պատմվածքը ղեակգրվում է Գորկու «Очерки и рассказы» ժողովածուների յերրորդ հատորի մեջ։ Խորհրդային նայումից հետո, բայցի առանձին հրատարակություններից, այդ պատմվածքը մանում է Գորկու լիակատար յերկերի ժողովածուի առաջին հատորի մեջ։

Ստեփան Շահումյանը «Մի անգամ աշխարհ...» պատմվածքի հայերեն թարգմանությունը կատարել է 1901 թ. Ռիդայում և առանձին զրքույկով լույս է տեսել 1901 թվին Թիֆլիսում։

II

Մ. Գորկու այս «Հեքիաթն» առաջին անգամ տպագրվել է բուլղերիկյան արդան «Звезда» թերթում (1911 թ. № 21)։ Ներկա թարգմանությունը կատար :

ված և 1915 թ. Պետերբուրգում լույս տեսած Մ. Գորկու «Сказки» զրքից: Ընկ. Մասովյանի այս թարգմանությունը առաջին անգամ տպագրվել է «Պայքար» թերթում 1916 թ. (№ 3 (7) և № 4 (8)) հունվարի 17-ի և 24-ի համարներում «Ազման» ծածկանունով:

III

Յերկրորդ «Հեքիաթն» առաջին անգամ լույս է տեսել «Звезда» թերթում 1911 թ. (№ 7): Այս թարգմանությունը նույնպես հատարված է 1915 թ. Պետերբուրգում լույս տեսած Մ. Գորկու «Сказки» զրքից: Թարգմանությունը հատարել է ընկ. Ա. Մասովյանը և տպագրվել է «Պայքար» թերթում 1916 թ. (№ 44 (48)), 30-ին հոկտեմբերի Ա. Նադարյան ծածկանունով:

IV

Յերրորդ «Հեքիաթն» առաջին անգամ տպագրվել է 1912 թ. «Звезда» թերթում (№ 6-ում): Հայերեն թարգմանությունը հատարել է ընկ. Ռ. Դաշտոյանն այդ նույն թերթից և տպագրել է «Նոր թուր» յերկշաբթաթերթում 1912 թ. № 5—6 միացյալ համարում: Վերահիշյալ բոլոր հեքիաթները ղեկեղված են Մաքսիմ Գորկու յերկերի լիակատար թողովածու 14-րդ հատորի մեջ «Сказки об Италии» ընդհանուր վերնագրի տակ:

V

Ս. Շահումյանի — Մ. Գորկու մասին գրած այս հոդվածը տպագրվել է 1911 թ. Բազմի բոլշևիկյան որդան «Современная жизнь» շաբաթաթերթի առաջին համարում «СТИВИН» ծածկանունով: — Այդ նույն տարագրությամբ Շահումյանը մի հոդված է գետեղում «Современная жизнь»-ի յերկրորդ համարում Լ. Ն. Տոլստոյի կրոնական հայացքների մասին: «Современная жизнь» շաբաթաթերթը լույս է տեսնում ընդամենը յերեք համար: Բազմի Ժանդարմերիան «С. Ж.»-ի 4-րդ համարը կալանքի յեյնթարկում է այդպիսով դադարում է թերթի հրատարակումը:

Թերթը խմբագրել է ինքը՝ Ս. Շահումյանը:

VI

Ընկ. Ա. Մուսվյանի — Մ. Գորկու «Հեքիաթներ»-ի մասին գրած այս հոդվածը տպագրվել է «Պայքար» թերթում 1916 թվի մարտի 6-ի համարում, «Ազման» ծածկանունով: Ընկ. Մուսվյանը հոդվածը գրել է 1915 թվին Պետերբուրգում «Жизнь и знание» հրատարակությամբ լույս տեսած Մ. Գորկու «Сказки» գրքի առթիվ: Այդ գրքի հեքիաթների մեծ մասը թարգմանաբար տպագրվել է «Պայքար»-ի համարներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Յերկու խոսք— Գ. Հովնան 5

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մի անգամ աշնանը— Ս. Շահումյան . . . 13
2. Հեքիաթ— Ա. Մռավյան 35
3. Հեքիաթ— Ա. Մռավյան 54
4. Հեքիաթ— Ռ. Դաշտոյան 64

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ս. Շահումյան— Մ. Գորկու մասին . . . 84
2. Ա. Մռավյան— Գորկու հեքիաթները . . . 110
- ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 117

[404]

U. P. for day 1941 w/ 11-11

Проз.

Проз. 1940

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040783

500
A $\frac{I}{4982}$

U64
ophrumy